# ԳԱՐՈՒՆ

## ԱՄՍԱԳԻՐ

ԷՋԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

1866

ԸՈՒՆԿՈՒՆ ՏԱՐԻ

Էմատեար 3.

*Պայծառ արփին արդ բարձրացաւ*
*Հալման սառին ժամէ արդէն.*
*Կարմիր վարդին ոստ կակղացաւ,*
*Ծաղկման ծառին ժամէ արդէն։*
*Պետրոս վարդապետ Ղափանցի։*

ՏՓԽԻՍ

1866

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համառօտ Տեսութիւն Եկեղեցական Պատմութեան. Մանդինեանց . . . . . 128—148
Տէրունական Աղօթքի Մեկնութիւն. Ա. Տէր Յակոբեանց. . . . . 148—154
Ընդվզումներն ու Հունը. Աբովեանց . . . 154—
Սոսայաղրութիւն Թիֆլիզցու. Ա. Տ. Յակոբեանց. 155—160
Մանկական աշխարհ. Կամսար Օձնեցի . . 161—176
Ընդկաստանի Ծովային Ճանապարհի դիւտը. Վ. Հահվերդեանց . . . . . 177—184
Նամակ Թիֆլիզից. Գ. Ներսիսեան . . . 185—188
Մանրավէպեր. . . . . 188—192

# ԳԱՐՈՒՆ

## ԱՄՍԱԳԻՐ

Ազգային Լուսաւորութեան և Դաստիարակութեան։

Ա. տարի — ամսատետր Գ. Մարտ — 1866.

## ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ։

## ՆԵՐՔԻՆ ՀԱՆԳԱՄԱՆՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԱՌԱՔԵԼՈՅ

### Քահանայապետութիւն Եկեղեցւոյ։

Առաքեալքն, ինչպէս Քրիստոս պատուիրել էր շրջում էին ամէն տեղ քարոզելու, և ոչ մի տեղ չունէին հաստատ բնակութիւն (Մարկ. ԺԶ—15), և քրիստոնէից թիւը օրէ օր բազմանալով հարկաւոր էին հոգևոր անդամներ Եկեղեցին կառավարելու և սրբազան խորհուրդները մատակարարելու, սահմանեցին ընտրել հաւատացեալներու միաբան հաւանութիւնով այնպիսի անդամներ, և կոչեցաւ Քահանայապետութիւն, որ բաժանվում էր երեք աստիճան. Եպիսկոպոս, Քահանայ և Սարկաւագ։

Եպիսկոպոս անունը նշանակում է Տեսուչ։ Առաքեալքն կարգեցին իւրաքանչիւր գաւառի մէջ եպիսկոպոսներ,

տալով նրանց ամենայն իշխանութիւնը ինչ որ ստացել էին Քրիստոսից։ Այս առաքելական կոչման արժանաւորութեան գերազանցութիւնը ցոյց է տալի Պաւղոս առաքեալը իւր առաջին թղթումը գրած Տիմոթէոսի վերա, որով խրատում է նրան գործածել իրան հաւատացած իշխանութիւնը, կարգել քահանայք և սարկաւագներ, (ա. Տիմ. գ. ե. 22) խրատել նրանց, (Անդ. ե. 1, 2) քաջալերել, (Անդ. ե. 17) և դատել (Անդ. ե. 19, 20)։ Տիտոսին թողնում է Կրետէ կղզումը, որ քահանայք կարգէ, (Տիտ. ա. 5) և կառավարէ նրանց։ Յովհաննու Յայտնութիւնից երևում է, որ Ասիու եօթն եկեղեցեաց իւրաքանչիւրին նշանակում է մէկ եպիսկոպոս Հրեշտակի անունով (Յայտ. բ. 1 և այլն)։ Իգնատիոս Աստուածաղդեացը իւր թղթերումը խօսելով կըղերներու վերա սովորաբար կոչում է եպիսկոպոսներ, քահանայք և սարկաւագներ։ Դիոնեսիոս Արիսպագացին աշակերտ Պաւղոս Առաքեալի գրում է, թէ ,,Եպիսկոպոսի գործն է քահանայք ձեռնադրել, Մեռոնը օրհնել և սեղանը օծել (Գիրք բ. գլ. 7)։ Որովհետև եպիսկոպոսական իշխանութիւնը ունի և այն՝ զոր ունին քահանայք, ուստի եպիսկոպոս և քահանայ անուններին համար չենք տեսնում նոր Կտակարանումն մէկ որոշակի բան յատկացած, այլ երբեմն երէց և երբեմն եպիսկոպոս են կոչում, ինչպէս Գործք առաքելոցի և Պաւղոսի թղթերու մէջ. ,,Եւ 'ի Մելետիայ յղեալ Եփեսոս կոչեաց զերիցունս եկեղեցւոյն։ Զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ յորում եդ զձեզ Հոգին Սուրբ տեսուչս հովուել զժողովուրդ Տեառն" (Գործք առ. ի. 17—28)։ ,,Զսան այնորիկ ես թողի զքեզ 'ի Կրէտէ, զի զոր ինչ միանգամ պակաս իցէ ուղղեսցես և կացուսցես ըստ քաղաքաց երիցունս"։ Եւ ապա բացատրում է, ,,Զի պարտ է եպիսկոպոսին անարատ լինել" (Տիտ. ա. 5, 7)։ Եւ իրանք առաքեալներն անուանում էին իրանց Երէց. ,,Զերիցունս այսուհետև աղաչեմ իբրև ե-

բիցակից» (ա. Պետ. ե. 1): «Յերիցուէ առ ընտրեալդ Պիւրիա»: «Յերիցուէ առ Դայիոս սիրելի» (բ. Յով. ա. 1: գ. Յովհ. 1): Նորահաստատ եկեղեցիքը մանկ. տալով հաւարկաւորութեանը, երբեմն ունէին շատ եպիսկոպոսներ մէկ տեղում (Փիլ. ա. 1), բայց հաւատացեալներուն միաւորելու համար տէր յետոյ մէկ գաւառին մէկ եպիսկոպոս:

Քահանայ նշանակումէ Երէց, և հաւասարի է, որ քրիստոնեայք առել են Հրէից մէջն, որովհետև առաջին անգամ քահանայքը կարգուեցան Երուսաղէմում (Գործ. ժա. 30): Քահանայից պարտաւորութիւնն էր, ուսուցանել ժողովրդեանը, և կատարել սրբազան խորհուրդները, և գտանվումէին եպիսկոպոսներու իշխանութեան ներքոյ: Նոքա էին նոյնպէս եպիսկոպոսներու խորհրդակիցներ:

Սարկաւագանունը նշանակումէ պաշտօնեայ, զոր Առաքեալքը սեպհականեցին սեղանի հօմն պաշտօնեայներուն (Գործ. զ. 2), և այս օրինակին հետևելով ուրիշ տեղերումն էլ մնացին այս երրորդ աստիճանը եկեղեցւոյն ծառայելու համար (ա. Տիմ. գ. 8): Նոցա պարտաւորութիւնն էր առաջ հոգալ աղքատներու ապրուստը, իսկ յետոյ ծառայել և սրբազան խորհրդին: Ստեփանոսի և Փիլիպպոսի գործքերը ցոյց են տալի, որ նոքա կարողանումէին և քարոզել. կային և այրի կանայք և կուսանք, որք ծառայումէին կանանց (Հով. ժզ. 1: Տիտ. բ. 3: ա. Տիմ. ե. 5—11), և սոյա պաշտօնն էր մերկացնել կանանցը մկրտութեան ժամանակ, հրահանգել նրանցը, օգնել աղքատներուն, հիւանդներուն և թշուառներուն: Այս ծառայութիւնը վերջումը դարձաւ սրբազնագործութեան պաշտօն, որ եկեղեցումը Աւետարան են կարդում և Սկիհը վերաբերում, հագնելով շապիկ և ձգելով ձախ ուսին ուրար, և կոչվում են սարկաւագուհիք, և իրանց համար սահմանեցին առանձին վանքեր, և իսկական պաշտօնը միանգամայն վերացաւ:

Երկրորդ դարումը Տերտուղիանոս կոչումէ եպիսկոպո-

սին Մեծ քահանայ (De Bapt. գլ. ԺԷ.)։ Այս սորա ժամանակը աւելացաւ եկեղեցւոյ պաշտօնէի ասաիճան ընթերցող կամ Ընդանոս (Ընդդէմ նեստորիկոսներուն գլուխ կգ.)։

Երրորդ դարու մը Որոգինէս կոչումէ եպիսկոպոսին Պապ, Տերտուղիանոս ծայրագոյն քահանայ, Դիոնէսիոս Աղեքսանդրացի երջանիկ Պապ։ Ընթերցողութեան ասաիճանի վերա աւելացան կիսասարկաւագութիւն, որ սարկաւագի պաշտօնի ծանրութիւնը ասստուածպաշտութեան ժամանակը թեթեւանայ։ Դոնատիստութիւն, որ էր Սաղմոսերգու, նորա պաշտօնն էր կանգնիլ դուռանը և ներս չթողուլ եկեղեցումը ասստուածպաշտութեան ժամանակ անհաւատներուն, մերժուածներուն, անծանօթներուն, իսկ պատարագի ժամանակ երեխայիցը և ապաշխարողներուն։ Երդմնեցուցչութիւն. սորա գործն էր երդմնեցնել դիւահարներուն, և մկրտութեան ժամանակ երդումը տալ մկրտուողներուն սատանիմէն հրաժարելու համար։

Առաքեալք, Մարգարէք, Աւետարանիչք։

Առաքելական եկեղեցւոյ քահանայապետութեան մէջ պէտք է դերազանցել առաւելապէս հոգեւոր պարգևները և պաշտօնը սահմանած Աստուծումէն յատկապէս սկզբնական եկեղեցւոյ տարածութեան համար. հոգեւոր պարգևներն էին՝ շնորհք բժշկութեան, ազգս լեզուաց. իսկ պաշտօնները՝ առաքելական, մարգարէական և աւետարանչական։

1) Առաքելական. երկոտասան առաքելոց հետ հաշուեցաւ և Պաւղոս հեթանոսներու առաքեալն. սա անուանումէ Տիտոսին և Եպաֆրոդիտոսին առաքեալ (բ. Որ. ը. 23։ Փիլիպ. բ. 25)։ Առաքելական կոչման գերազանց առանձնաշնորհութիւնքն են. 1) նոցա անընդմիջական կարգելն Յիսուսիմէն այն պաշտօնի մէջ։ 2) Աստուածային ներշնչումն կամ Հոգւոյն Սրբոյ յայտնի հաղորդութիւնն, ուսուցանելով նրանց ամենայն ճշմարտութիւնքը և շնորհելով լիակատար իշխանու-

թիւն քարոզելու և կառավարելու։ 3) Յիսուս Քրիստոսին տեսնել, որին պարտաւոր եղան լինել ականատես վկայք նորա ամեն գործողութեանց. 4) նոցա քարոզութիւնն աշխարհի երեսին. 5) բժշկութեան շնորհքն. 6) Հոգւոյն Սրբոյ պարգևների տալու իշխանութիւնն ձեռնադրութիւնով. և 7) կանոնական թղթերի գրելու իրաւունքն։ Չնայելով այսչափ առաւելապարգև իրաւունքներին, նոքա շատ բաների մէջ չէին միայնակ ներգործում, բայց միայն հաւատացեալներու ընդհանուր համաձայնութեամբ։

2) Մարդարէք կոչվում էին առաջին եկեղեցու մէջ նոքա՝ որք ունէին շնորհք ապագայ բաների գուշակելու, և նոքա՝ որք Աստուծոյ ազդեցութիւնով էին ուխտի մարգարէութիւնքը և նոր ուխտի անցքերը համեմատաբար մեկնում էին Աւետարանի ճշմարտութիւնը հաստատելով։ Թէպէտ մարգարէական ոգին է շնորհք անցողական, սակայն եղան անձինքներ, որոց մէջ միայց հաստատուն, և նրանցմէն կազմեցան եկեղեցու քարոզիչներու առանձին դասն (Գործ. ժդ. 1). որք են՝ Ագաբոս, Յուդա, և Շիղայ, և Փիլիպպոս սարկաւագի չորս աղջիկներն (Գործ. ժա. 27, 28։ ժե. 32։ իա. 9)։

3) Աւետարանիչքն էին առաքելոյց գործակիցներու ոմանք, որք յատկապէս նուիրած էին իրանցը Յիսուս Քրիստոսին քարոզելու բանով և թղթով։ Սուրբ գրքի մէջ այս կոչմամբ յիշատակվում են Փիլիպպոս սարկաւագ (Գործ. իա. 8) և Տիմոթէոս (բ. Տիմ. դ. 5)։

## ԵԿԵՂԵՑՒՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Մկրտութեան խորհուրդը սահմանեց Քրիստոս, և ամենայն հաւատացեալ պիտի մկրտի ինչպէս պատուիրեց (Մատ. իբ. 19)։ Եւ է առաջին ճանապարհ մտնելու Քրիստոսի եկեղեցու մէջ և քրիստոնէութեան նշան, որ տալիս են մա-

նուկներուն և հասակաւորներուն, և կատարվումէր երեք անգամ ջրի մէջ ընկղմելով օրինակ Քրիստոսի թաղման և յարութեան (Հռոմ. բ. 4)։

Մկրտութեան արարողութիւնը ինչպէս և միւս եկեղեցւոյ խորհուրդները չէնք գտնում Նոր կտակարանումը, զի Քրիստոս աւանդեց, և Հոգին Սուրբ սովորեցրեց կատարելու կերպը, ,,որպէս և Հոգին տայր բարբառել նոցա'' (Գործ. բ. 4), և թէ՝ ,,Առանց իմ ոչ ինչ կարէք առնել'' (Յովհ. ժե. 5)։ Ուրեմն և եկեղեցական խորհուրդների կատարելու կերպը թէպէտ Առաքեալքը սահմանեցին, բայց Հոգւոյն Սրբոյ ներգործութիւնով, պատճառ որ՝ Եկեղեցին Քրիստոս հիմնեց, Հոգին Սուրբ կատարելագործեց. իսկ Առաքեալքն էին մշակներ, որոց ճարտարապետն էր Քրիստոս, և շինեցին Հոգւոյն Սրբոյ գործակցութիւնով (Մարկ, ժզ. 20)։ Գործք առաքելոց գրքի հեղինակը պատմումէ միայն եկեղեցւոյ շինութեան արտաքին անցքը Առաքելոց ձեռքով, բայց ներքին հանգամանքների վերա ոչինչ չէ խօսում, մանաւանդ որ սկսածն էլ չէ աւարտել, սակայն առաջին դարու եկեղեցական մատենագիրներուց մէկը, որ է Առաքելոց ժամանակակից և Պաւղոսի աշակերտ, նա ինքն է Դիոնեսիոս Արիսպագացին Աթէնքի եպիսկոպոսն, որ Հրէից մէն և հեթանոսներուց դարձածների համար, այսպէս է գրում մկրտութեան արարողութեան համար. ,,Երբեմայի առաջնորդն նախապէս սովորեցնումէ նրան հաւատը, ապա տանումէին եկեղեցին, ուր եկեղեցւոյ բոլոր ուխտն ժողովումէր, և կարդումէին նորա վերա մէկ օրհնութիւն։ Յետոյ հարցնում էր թէ ի՞նչ բանի համար է եկել, իսկ նա ինչպէս իւր առաջնորդն սովորեցրել էր՝ պատասխանումէր, անարգելով անաստուածութիւն և անգիտութիւնը՝ ցանկանումէ բարութեան և աստուածային կեանքին։ Ապա երեսը դարձնելով դէպ ի արևմուտք երեք անգամ հրաժարվումէր սատանայիմէն, և դառնալով դէպ ի արևելք երեք անգամ ասումէր հաւատի դա-

ւանութիւնը, և մկրտօղն դնելով ձեռքը նորա գլխին աղօթք էր անում։ Արամէն յետոյ տկլորացնում էին նրան սարկաւագներն, և քահանայքն օրհնում էին ջուրը սրբազան կոչումով և սուրբ Մեսոնը երեք անգամ խաչանիշ թափելով, ու մարգարէից օրհնութիւնքն քաղցր ձայնով երգում էին, և նուիրածի անունը տալով մկրտում էին երեք անգամ ընկղմելով ջրի մէջ և վերացնելով ամենասուրբ Երրորդութեան անունը ասելով, (Գիրք բ. գլ. 2) և աւազանից ընդունում էր կնքահայրն (Տերտ. վան մկրտ. գլ. 18)։ Մկրտածի անունը գրում էին մատեանի մէջ, որ կոչվում էր Դպրութիւն կենաց և հագցնում էին սպիտակ շոր ներքին և արտաքին մաքրութեան նշան։

Երրորդ դարում աւելացան մի քանի ծէսեր, որ մկրտուողին սատանայիմէն հրաժարելուց յետոյ օծում էին իւղով, օրինակ պատուաստութեան պատգարեր ձիթենու վերա, որ է Քրիստոս (Instit. Apost. գիրք ը. գլ. 62), և յետոյ ընկղմում էին աւազանի մէջ։ Մկրտելուց յետոյ տալիս էին նորա ձեռքին մեղրամոմ, որպէս նշան հոգեւոր լուսաւորութեան, իսկ հիւանդներուն և կալանաւորներուն մկրտում էին ջուրը ցանելով երեսին։ Մկրտածներուն համբուրում էին Քրիստոսի հաշտութեան նշան նրա հետ (Պիպլ. գիրք դ. եր. 8) և գլխին կապում էին պսակ, և սպիտակ հանդերձը հագնում էր ութն օր (Պիպլ. թուղթ.)։

Առաջին երեք դարում տեսնում ենք որ սարկաւագներն էլ էին մկրտում, ինչպէս եօթն սարկաւագացմէն Փիլիպպոս մկրտեց Սամարացուցը և Եթիոպացի ներքինուն, և յետոյ մեծ անկարգութիւնք առաջացան, մինչև որ սարկաւագները բռնեցին քահանայից տեղը, վասն որոյ Նիկիու առաջին տիեզերական ժողովքումը արգելեցին այս (Կանոն. ԺԷ)։

Հայաստանեայց Եկեղեցին կատարում է առաջին դարուն համաձայն, ինչպէս գրում է Դիոնեսիոս, միայն ձեռքը դնելու տեղ խաչն է դնում։ Երրորդ դարու ծէսերուց ունի մամ

տալը, համբոյրը և պսակ կապելը՝ որ է նարօտը։ Իսկ մը-
կրտութենից առաջ չէ օծանում, զի չէ առաքելական, և ոչ
ջուր ցանելով է մկրտում։

Բայց ի առաքելական մկրտութեան արարողութենից մի
քանի եկեղեցիք աւելացրին ինչ ինչ ծէսեր։

Նախ՝ Լատինաց եկեղեցին բոլորովին շեղուեցաւ իւր
նորաձևութեամբ և քանդեց առաքելական սահմանը. ա) Հը-
րաժարիմքից առաջ քահանայն երեք անգամ փչում է երեխի
վերա, և խաչակնքում է ճակատը և միւս անդամները, որ-
պէս թէ նրամով նուաճուին դևերը և խորտակուին նոցա որո-
գայթները։ բ) Դնում է երեխայի բերանումը օրհնած աղ,
որ է մկրտութեան շնորհքի, և մարդոյ ապականութենից ա-
զատութեան նշան։ գ) Թքով շփում է ականջներն ու պնչե-
րը, որ լսէ Քրիստոսի խօսքը, և առաքինութեան հոտը
առնու։ դ) Հրաժարիմքից յետոյ օծում է թիկունքը և
կուրծքը, պատրաստութեան նշան դևերու հետ պատերազ-
մելու, և ապա մկրտում է։ ե) Տղայ երեխանց համար սահ-
մանուած է կնքահայր, իսկ աղջկանց համար՝ կնքամայր, նոյն-
պէս երկու սեռն էլ կարող են իմիասին լինել համաձայն սահ-
մանադրութեան Թրիտէնդիու ժողովքին։ զ) Հարկաւոր
դէպքերումը չէ պահանջվում կնքահայր կամ կնքամայր։
է) Մկրտութիւնը լինում է երեք տեսակ՝ ջուրը ցանելով,
մէկ կամ երկու անդամ ընկղմելով աւազանումը, և երբեմն
գլուխը դրջելով, պատահում է որ լանում է երբեմն թիկ-
կունքը, կուրծքը, կամ մարմնոյ նշանաւոր անդամները, և մը-
կրտութիւնը համարվում է օրինաւոր։ ը) Եթէ պատահում
է որ կինը դժուար է ծնում երեխին, այն րոպէին քահանայն
ներկայ է գտնվում պատրաստ ունենալով օրհնած ջուրը, և
երբ ծնում է որ և իցէ անդամ, թէ ձեռք և թէ ոտք, նոյն
ժամին մկրտում է առաջուց պատրաստած ջրովը, և ինչ ժա-
մանակ անվնաս է ծնվում, այն ժամանակ մկրտութիւնը կրկ-
նվում է, իսկ եթէ գլուխը ծնի և մկրտի, էլ խորհուրդը

չէ կրկնվում։ Լաթերանու և Ֆլորենցիու ժողովքներու սահմանադրութեամբ ամենայն ոք իրաւունք ունի մկրտելու, թէ մարդ լինի և թէ կին. թէ հաւատացեալ և թէ անհաւատ, բայց առանց հանդիսաւոր արարողութեան, զի թէ աշխարհականը լրիւ կատարէ մկրտութեան կարգը. համարվում է սեղանակապութիւն, և մկրտութիւնը անկանոն (Ուղ և ծուծ. դիրք Աստուածաբան. յաղագս մկրտութեան)։

Երկրորդ՝ Յունաց եկեղեցի։ ա) Հրաժարիմքից առաջ փչում է քահանայն երեխի երեսին և խաչակնքում է ճակատը, բերանը և կուրծքը։ Փչելն նշանակում է Աստուծոյ փչելը Ադամի երեսին՝ որով եղաւ հոգի կենդանի, և Քրիստոսի փչելը Առաքելոց վերա, որով տաւ Սուրբ Հոգին։ բ) Փչում է ջրի վերա, օրինակ շրջելու Սուրբ Հոգւոյն ըստեղծագործութիւնից առաջ ջրերու վերա։ գ) Օծում է նախ՝ ճակատը, թիկունքը, կուրծքը, ականջը, ձեռները և ոտները ու յետոյ մկրտում է։ դ) Հարկաւոր ժամանակը կարող է և աշխարհականն էլ մկրտել։ ե) Հիւանդին մկրտում է ցանելով ջուրը գլխի վերա։ զ) Անքահայրերը լինում են երկու արական և իգական։

## ԴՐՈՇՄ

Դրոշմի խորհուրդը կատարում էին Առաքեալք ձեռքը դնելով մկրտածի վերա իբրև Հոգւոյն Սրբոյ պարգևներու կնիք, և Հոգին Սուրբ իջնում էր նոցա վերա զգալի նշանով։ Եւ եկեղեցին շուտով ընկալաւ մեռոնի գործածութիւնը, զոր Առաքեալք սահմանեցին, ինչպէս Դիոնեսիոս Արիսպագացին գրում է թէ, մկրտութենից յետոյ պէտք է դրոշմել սուրբ մեռոնով ճակատը, աչքերը, ականջները, քիթը, բերանը, ձեռները, սիրտը, թիկունքը և ոտները. (Գիրք բ. գլ. 2) իբրև նշան զինուորութեան և հոգևոր յաղթանակութեան։ Դրոշմի խորհուրդը կատարում էին ինչպէս եպիսկոպոսները,

նոյնպէս և քահանայքը նոյն ժամին մկրտութենից յետոյ։ Դրոշմածը շրջումէր մկրտութեան ղեկտով ութն օր, և ութերորդ օրը լանում էր քահանայն դրոշմածի անդամները. բայց յետոյ սահմանեցաւ մի և նոյն ժամանակին հանել մեռոնից, որ ոչինչ անմաքրութիւն չգիտէի։—Մեռոնի նիւթն էր ձիթենու իւղը, որի հետ խառնումէին բալասանի իւղ և ուրիշ ծաղիկների հիւթեր։ Օրհնողն էր իւրաքանչիւր դաւառի եպիսկոպոսը. և չորրորդ դարումը հաստատուելով պատրիարքական իշխանութիւնը, և դաւառներու եպիսկոպոսները ստորադրուելով նրանց՝ այնուհետև մեռոն օրհնելու իրաւունքը սեպհականուեցաւ միայն պատրիարքներուն, իսկ Հռոմայ եկեղեցին կրկին թոյլատրեց իւր եպիսկոպոսներուն մեռոն օրհնելու իշխանութիւնը։

Հայոց եկեղեցին պահպանումէ սրբութեամբ առաքելական սահմանադրութիւնը։ Բայց ոմանք եկեղեցիք մոցրին մի քանի ծէսեր։

Նախ՝ Յունաց եկեղեցին մկրտութենից յետոյ. ա) քահանայն բուրվառը ձեռքին, և մանկաբարձը՝ աղջկին պարտումեն խաչաձև աւազանի չորս կողմը երեք անգամ։ Այս նշանակումէ, թէ ինչպէս Իսրայէլացւոյց ժողովուրդը Փարաւոնի խեղդելուց յետոյ Կարմիր ծովումը պար բռնեց նորա ափնումը երգելով՝ այսպէս և նոր մկրտածը խեղդելով մկրտութեան ջրի մէջ հին մարդուն՝ հոգևորապէս ուրախանումէ և հանդիսացնումէ շրջելով աւազանի չորս կողմը։ Իսկ երեք անգամ պատելը, է նորա հոգւոյ նշանագրութիւնը սուրբ Երրորդութեան և Եկեղեցւոյ հետ։ Այ ինչպէս որ բոլորակը չունելով սկիզբն և վախճան՝ է նշան յաւիտենականութեան, ուստի շրջելը նշանակումէ յաւիտենականութիւնը և մկրտածի անսուտ խոստմունքը, որով նա միաւորվումէ Աստուծոյ հետ, և բ) մեռոնը քսումեն բարակ փայտի կտորով։

Երկրորդ՝ Լատինաց եկեղեցին այսպէս է աստուածա-

բանում (Ուղեծուծ. յաղագս դրոշմի), որպէս թէ Քրիս-տոս Դրոշմի խորհուրդը սահմանել է յարութենից յետոյ, այն խօսքով, թէ ,,որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ" (Մատ. ի. 21)։ Եւ այս բանին համեմատ են բերում Փաբիանոս պապի ասածը, որ երրորդ դարումն էր, թէ Քրիստոս, վերջին ընթրիքումը աւագ հինգշաբաթի երեկոյին սովորեցրեց աշակերտներուն Դրոշմի արարողութիւնը, և այս պատճառով սովորութիւն մնաց եկեղեցումը, օրհնել մեռոնը աւագ հինգշաբաթի օրը։ Վերջին ընթրիքը աւելի մանրամասն է դրում Յովհաննէս աւետարանիչը (գլ. ԺԳ—ԺԷ), բայց Դրոշմի համար ոչինչ յիշատակութիւն չկայ։ Դրոշմի խորհրդակատարն է միայն եպիսկոպոսն և ուրիշ ոչ ոք, և միայն ճակատն է օծում ասելով, ,,նշանում եմ քեզ խաչի նշանով, և դրոշմում եմ քեզ փրկութեան մեռոնով յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ". այս ժամանակ պիտի ներկայ լինի կնքահայրն, և եպիսկոպոսն թեթև ապտակ է խփում ամեն մէկ դրոշմելու ժամանակին, որ իմանան թէ պիտի պատրաստ լինին Քրիստոսի համար համբերել ամենայն բանին։ Ուստի այս պատճառաւ Դրոշմը չեն տալի մկրտութեան հետ ինչպէս առաքելական աւանդութիւն է, այլ մինչև տասներկու կամ եօթն տարեկան դառնալը. և այսչափ միջոցումը, եթէ կնքահայրն է վախճանում կամ մէկ ուրիշը պիտի լինի կամ թէ առանց նրան. և թէ մկրտածը վախճանի՝ մնում է զուրկ այս հարկաւոր խորհրդից, բայց ինչպէս պատմութենից երևում է, քահանայքն էլ են կատարելիս Դրոշմի խորհուրդը, բայց յետոյ արգիլել են և սեպհականացրել եպիսկոպոսներուն, և թէ քահանայքը կատարում էին երևում է Գրիգոր Ա. պապի ներգործութիւնից վեցերորդ դարումը, որ տեսնելով՝ թէ Սարդինիու քահանայքը մկրտեալներուն դրոշմում են, արգիլեց, բայց երբ որ ժողովրդեան մէջ խռովութիւն ծագեցաւ, թոյլ տուաւ կատարել, միայն քահանայապետի կարգադրութիւնով։

## ՊԱՏԱՐԱԳ և ՀԱՅՈՐԴՈՒԹԻՒՆ

Առաքելոց ժամանակ ասաուածպաշտութեան հասարակական գործքը ընդհանրապէս կոչվում էր Պատարագ կամ պաշտօն (Ղուկ. ա. 23։ Գործ. ժդ. 2։ Եբր. ը. 6), բայց յատկապէս այս անունը սեպհականուած էր այնպիսի ասաուածպաշտութեան՝ երբ որ կատարվում էր հաղորդութեան խորհուրդը։ Առաջին դարու պատարագի արարողութիւնը որչափ յայտնի է, չունէր սահմանուած աղօթք, այլ Եկեղեցոյ առաջնորդները կատարում էին իրանց կամքին, ինչպէս Պաւղոս առաքեալը Տրոադայ քաղաքում սկսեց և աւարտեց շարունակ վարդապետութիւնով ողջգիշերը (Գործ. ի. 7—11)։ Եւ սովորաբար լինում էր. ա) սուրբ գրքեր կարդալով. բ) հոգևոր երգերով. գ) քարոզութիւնով, որ ոչ թէ միայն առաջնորդներն էին ասում, այլ և նոքա, որք ընդունակութիւն ունէին քարոզութեան և Աստուծումէն կոչուած էին, իսկ կանայք չէին կարող. դ) աղօթք, զոր սկսում էր եպիսկոպոսը կամ քահանայն, արականներն կանգնում էին գլուխը բաց, իսկ կանայք՝ գլուխը ծածկած էին աղօթում. ե) նուէրք հացի ու գինի, զոր բերում էր ժողովուրդը սրբազնագործելու և աղքատներու համար. զ) նուէրքի սրբազնագործելը Փրկչի էական բանով, և է) նորա բաժանելը սարկաւագներու ձեռքով ներկայ գտնուածներուն։ Պատարագի խորհուրդը կատարվում էր առաքելոց ժամանակ ամեն օր, և ապա շաբաթ և կիւրակէ օրերը նշանակուեցան։ Բռնութեան պատճառաւ պատարագի կատարումն լինում էր երեկոյին ամենայն հաւատացեալներու ներկայութեանը։

Հրուսաղէմայ եկեղեցին ունէր պատարագամատոյց կամ խորհրդատետր, զոր շինել էր նորա առաջին եպիսկոպոս Յակոբոս Տեառն եղբայրն։ Աղէքսանդրիայի եկեղեցին՝ Մարկոս աւետարանչինը, և Հռոմայ եկեղեցին՝ Պղեմայ եպիսկոպոսինը. սակայն չունինք այժմ նոցա իսկականը, որոց-

մէն կարողանանք իմանալ արարողութեան կերպը, բայց կարելի է հաւատեաւ ասել թէ, թէպէտ աղօթքները զանազան կլինէին, սակայն կատարելու կերպը միատեսակ կլինէր, ինչպէս առաջին երեք դարերու մատենագիրները գրումեն. նախ՝ առաջին դարու Դիոնեսիոս Արիսպագացին (Գիրք բ. գլ. գ), թէ ,,Պատարագիչն կատարելով սեղանի վերա աղօթքը (այսինքն խորհրդական սպասը դնելուց յետոյ) խնկարկութիւնով իջնումէ այն տեղից և ժողովրդեան շուրջ դալով կրկին բարձրանումէ բեմի վերա, և սկսումէ եկեղեցոյ ձայնակցութիւնով սաղմոս, և նոյն ժամին պաշտօնեայն կարդումէ հին ու նոր կտակարանները, ապա դասանութիւնը: Արամէն յետոյ դուրս են գալի եկեղեցուց երեխայքը, դիւահարները և ապաշխարողները, և ներքը մնումեն արժանաւորները, սարկաւագներից և կիսասարկաւագներից ոմանք կանգնումեն եկեղեցու դռներումը, և ոմանք ուրիշ պաշտօնի վերա, իսկ նախասարկաւագը վերաբերումէ սրբազան հացն ու բաժակը դէպ ի սեղանը, և պատարագիչը կատարումէ աղօթքը և տալիս է ամենքին խաղաղութիւն, ապա ողջոյն են տալի միմեանց, և սկսումէ արժանաւոր քրիստոնէից կենդանեաց և ննջեցելոց անուններն յիշատակութիւնը, և ապա լանումէ պատարագիչն ձեռքերը, և հացն ու գինին սրբազնագործելուց յետոյ ցոյց է տալիս ամենեցուն, ու յետոյ հաղորդումէ ինքն և ուրիշներուն էլ հրաւիրումէ դէպ ի այն:

Երկրորդ՝ գանումենք երկրորդ և երրորդ դարու մատենագիրներու մօտ, որք են Յուստինոս, Իրենէոս, Որոգինէս և Կիպրիանոս, Պատարագի շարունակութեան արարողութիւնը խորհրդի վերաբերելուց յետոյ, թէ՝ սարկաւագը ձայն էր տալի ,,ընդ դրկեցէք և համբուրեցէք զմիմեանս փոխադարձաբար": Քահանայն՝ ,,Ի վեր ընծայեցուցէք ըզմիտս": Ժողովուրդն՝ ,,Ունիմք առ Տէր": Քահանայն՝ ,,գոհացարուք զՏեառնէ": Ժողովուրդն՝ ,,արժան և իրաւ": Յետոյ ասումէին Սերոբէից երգը, ,,Սուրբ, Սուրբ, Սուրբ,

Տէր Աստուած Սաբաւովթ»։ Այս էական բանը՝ «Արէ՛ք, կերէ՛ք». և «Արբէ՛ք 'ի սմանէ», յետոյ աղաղակումենք Աստուծոյն որ ուղարկէ Սուրբ Հոգուն առաջև դրած ընծայի վերա և փոխէ հացն ու գինին 'ի Մարմին և Արիւն Քրիստոսի։ Պատարեալով այս հոգևոր և անարիւն զենումն, աղօթումենք դէպ ի Նրան եկեղեցւոյ, աշխարհի խաղաղութեան համար, թագաւորներու, զօրքերու, եկեղեցւոյ անդամներու յաջողութեան համար, հիւանդներու բժշկութեան համար, նեղացածներուն օգնականութեան համար, և նոցա համար՝ որք օգնութիւն են խնդրում։ Սրամէն յետոյ յիշատակումենք նահատակներուն, մարգարէից, առաքելոցը և մարտիրոսներուն։ Վերջապէս ասումենք տէրունական աղօթքը «Հայր մեր»։ Եւ երբ որ քահանայն ասումէ բարձր «'ի Սրբութիւն սրբոց»՝ ժողովուրդը գոչումէ, «միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս». և ապա երդ՝ որ հրաւիրումէ հաղորդիլ սուրբ խորհրդին «Մաշակեցէք և տեսէք, զի քաղցր է Տէր»։ Այս ժամանակ ամենայն հաւատացեալներն հաղորդվումեն սուրբ խորհրդին քահանայի ձեռքով։ Պատարագն աւարտվումէ գոհացողական փառաբանութիւնով և արձակման աղօթքով։ Այն տեղ եղածներուն հաղորդելուց յետոյ, մէկ մասն էլ ուղարկումէին սարկաւագներու ձեռքով հիւանդներուն և բանտարկեալներուն հաղորդելու, որ ասելոցաւ թ ո շ ա կ։—Սարկաւագներու ձեռքով հաղորդութիւն տալը վերացաւ Նիկիոյ առաջին տիեզերական ժողովքով (Կանոն. ԺԷ)։

Նէրքի հացը՝ զոր բերումէին հաւատացեալները, էր բաղարջ, թէպէտ Ղուկաս ոչինչ չէ գրում սորա համար, բայց երևումէ մէկ նշոյլ նորա գրուածքից, որ Քրիստոսի Եկեղեցին նախապէս կազմեցաւ Երուսաղէմ քաղաքումը, և ինչ տեղ էլ որ Աւետարանը քարոզեցաւ Երուսաղէմից դուրս հեթանոսներու մէջ, նոցա հետ խառն գտնվումէին և Հրէայք, որք թէպէտ հաւատացեալ էին Քրիստոսին, բայց

մովսիսական օրէնքը խառնում էին նոր օրէնքներու հետ, ինչպէս էր թլփատութիւնը, ուստի և նէրքի հացն էր բաղարջ, պատճառ որ Հրէայք սովոր էին Մովսէսի օրէնքով ամենայն օր առաջաւորաց սեղանի վերա տասներկու բաղարջ հաց դնել, որ Քրիստոսի անսխալ մարմնոյ օրինակն էր, ուրեմն այս սովորութիւնն էլ կատարում էին և առաքելոց ժամանակը, իսկ գինին նոյնպէս էր անջրախառն:

Հայաստանեայց եկեղեցին կատարում է այս ամենը համաձայն առաքելական եկեղեցուն, և ժողովրդեանը հաղորդում է մի և նոյն սրբագործեալ հացն ու գինին, որիմէն ինքն է ճաշակել, իսկ ոմանք եկեղեցիք մի քանի փոփոխութիւններ արին:

Նախ՝ Լատինաց եկեղեցին առաջին դարերում կատարում էր բաղարջ հացով, և ապա սկսեց խմորուն կատարել, ինչպէս Լևոն Ա. պապի տումարից երևում է, որ Յոյնք ջրախառն էին պատարագում, օրինակ բերելով Քրիստոսի կողքից բղխած արիւնն ու ջուրը, իսկ Լևոն այսպէս է մեկնում, թէ ,,ջուրը լուացման (մկրտութեան) նշանակ էր, իսկ արիւնը՝ ըմպելու'', բայց հացի համար յիշատակութիւն չէ անում, ըստ որում իրանք էլ էին խմորուն կատարում, և ինչերորդ դարումը կրկին սկսեցին անխմոր կատարել, իսկ բաժակումը յետոյ ջուր խառնելը մնաց: բ. Լատինաց եկեղեցին հակառակ առաքելական սահմանադրութեան և միւս եկեղեցեաց չէ հաղորդում ժողովրդեանը սրբագործած հացն ու գինին, այլ պատարագի ժամանակ մէկ թէփշով դրած է սեղանի վերա մէկ կողմը հարիւր կամ աւելի ապասու չափ նշխարքի կտորներ, և ժամարարը կատարելով ողջ նշխարքի և բաժակի վերա, որ սկըհով ունի իւր առաջ խորհուրդը, ինքն է ճաշակում բոլորը, իսկ թէփշով դրած ցամաք նշխարի կտորներով հաղորդում է ժողովրդեանը առանց բաժակի, որպէս թէ էնդոնք էլ դոյափոխուած են: բ) Նշխարը մի և նոյն օրը չէն թխում, այլ մի անգամին այնչափ են պատրաստում,

որ մի շաբաթ և աւելի օրեր բաւականանան։ գ) Հասարակ տներու մէջն էլ պատարագ են անում։ ե) Սեղանի վերա դրնում են օծած մոմեղէն գաւը, որ ժողովքով արդեալծ է։ զ) Սմենայն օր պատարագ պիտի մատուցանեն քանի քահանայ էլ որ կան հերթով, և այն մէկ սեղանի վերա։ Դ) է) պատարագը լինում է ձայնաւոր և անձայն։

Երկրորդ՝ Յունաց եկեղեցին կատարում է խմորուն հացով, բայց թէ ե՞րբ է սկսել, պատմութիւնը չէ ցոյց տալի, իսկ Գրիգոր Աստուածաբանը, որ ծաղկեցաւ չորրորդ դարում, ասում է թէ ,,խմորեալն ո՛չ լինի կենդանական հաց՛՛, իսկ ջրախառն պատարագելու համար Յոհան Ոսկեբերանը այսպէս է գրում, (Մատ. մեկն.) թէ ,,սրամով միւս չար հերձուածը արմատախիլ է անում, պատճառ որ կան ոմանք, որ սուրբ խորհրդում ջուր են խառնում, վաղան բերքից է ասում, և վաղը գինի կծնի և ոչ ջուր՛՛։ Այս գրուածքներից երևում է որ Յունաց եկեղեցիքը առաջին չորս դարում զանազան էին կատարում, ոմանք բաղարջով և անջուր, և ոմանք ջրով և խմորուն, և ապա միակերպ սկսան կատարել խմորուն և ջրախառն։ բ) Յոյնքն էլ պատարագում են հին հացով։ գ) Նախասրբեալ պատարագն։ դ) Երկու անգամ ջուր ածեն, ցուրտ և ջերմ։

## ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

Ովքեր որ մկրտութենից յետոյ ընկնում էին ծանր յանցանքների մէջ, հրապարակաւ խոստովանում էին (Գործ. ԺԹ. 18), որոց վերա դնում էին ծանր ապաշխարանք։ Ապաշխարողներու արտաքին նշաններն էին՝ ծնրադրութիւն, գետնի վերա փռուիլը, արտասուք, պահք, աղերսանք, հրաժարուած էին հասարակաց աղօթքից, ողորմութիւնից և նոցա անունները չէին յիշվում սեղանի առջև։ Ապաշխարութեան ժամանակը կանոնով սահմանած չէր, այլ ապաշխարողի ջերմեռանդութեանը մտիկ տալով արձակում էր քահանայն եկեղեց-

ւոյ առջև աղօթքով և ձեռքը դնելով։ Եւ որովհետև հրապարակական խոստովանութիւնը հետևուհետը կրցրեց առաջին ուղղութիւնը, և ծածկումէին երևելի յանցանքները, ուստի սահմանուեցաւ երրորդ դարումը առանձին խոստովանութիւն մէկ քահանայի առջև։

## ՊՍԱԿ

Ծնողքն կամ հոգաբարձուքն մեծ հոգս ունէին շուտով ամուսնացնելու զաւակներուն՝ որ չարութիւնը մուտ չըգտանէ նոցա մէջ. նախապէս պահանջվումէր հաւանութիւն երկու կողմից, ապա հրապարակաւ կատարումէին եկեղեցումը և պսակումէր նրանցը առաջնորդն, և պատարագ էր մատուցանում պսակի հաստատութեան համար (Տերտուղ. կնոջ վերա ժա.)։ Հարսն ու փեսայն ձեռն էին տալի միմեանց, և հարսն առնումէր մարդումէն մատանիք՝ որի վերա փորուած էր խաչ, կամ առյաքինութեանց մէկ նշան, այն է՝ աղաւնի, կամ խաբիսխ և կամ ձուկն, որովհետև քրիստոնէից կնիքներն էստունք էին (Աղեմ. ադէքս. Մանկավ. գ. ա.) և հին ժամանակը մատանիքով էին կնքում (մհրում) թղթերը։

Քրիստոնեայք հեռի էին իրանց կանանցմէն ուների և պասի օրերը, որոց նշանը երևումէ կանոնների մէջ, որ տէրունական ուներում, կիրակամուտ և կիրակի և պաս օրերում պսակ չէ լինում, նոյնպէս եթէ այդ օրերը ոմանք կատարել են՝ համարելով իբրև յանցանք խոստովանումեն քահանային։ Տերտուղիանոս վկայումէ (Ա՛ս կինն ա. և. և բ. և յդ. Յար. մարմ. ը.), թէ շատերը ամուսնութեան մէջ պահպանեցին սրբութիւն միմեանց հաւանութեամբ։ Քրիստոնէական ամուսնութեան նախանձելի կեանքը այսպէս է նկարագրում նա՝ ,,հաւատացեալ ամուսիններն միասին են աղում լուծը. մէկ մարմին և մէկ հոգի, միասին են՝ աղօթում, միասին են ծունր դնում, միասին են պահում, իրարու խրատում, և միմեանց յարդարում։ Միասին են եկեղեցում և Տիրոջ սեղանում,

հալածանքում և հանդիսաւոր մէջ, ոչինչ են թաղցնում իրաւունքն և չեն բեռն լինում միմեանց, հիւանդներուն տեսնում են աներկիւղ, խաղաղ կան սուրբ պատարագի առջև, միաբան երգում են երգեր և սաղմոսներ, միմեանց քաջալերութիւն են Աստուծոյն փառաբանելով»:

Հաւատացեալներուն հրամայեց չկար ամուսնանալ անհաւատներու հետ, բայց եթէ առաջադոյն ամուսնացած էին չբաժանուիլ նրանցմէն (ա. Որնթ. է. 39): Երկրորդ ամուսնութիւնը թէպէտ հրամայած էր՝ այլ նեղելով տկարութեանը (Տերտ. առ կին. բ.), և մի քանի եկեղեցիք ապաշխարանք էին դնում:

Առաջին երեք դարումը շատ յարգի էր կուսութիւնը, մինչև որ թէ տղայ և թէ աղջիկ վաթսուն և եօթանասուն տարեկան չէին ամուսնանում: Որոգինէսի ձախողակ նախանձը կուսութեան մասին մինչև ոչ ատիճան ծուեցաւ, և ժուժկալութեան համար շատացաւ սովորութիւնը ներքինի շինելու իրանց, մինչև կանոններով հարկ եղաւ արգելել:

Աղանդաւոր խստակրօնները չափիցն աւելի ձգուեցան, ոմանք դատապարտելով երկրորդ ամուսնութիւնը իբրև շնութիւն և կէսք՝ ամուսնութիւնը առ հասարակ պոռնկութիւն համարելով մարդոյ և կնոջ զուգաւորութիւնը: Սուրբն Կլեմէս Աղեքսանդրացի սոյա վերա է ձգում Պաւղոսի բանը՝ թէ «կլինի յետին ժամանակներում, որ կսկսին արգիլել մարդկանց ամուսնութենից (Մանկաւ. գ: Յաճախ. գ: Եթենաղ. Պատասխ: Տեր-ոս. առ կին. ա. է: Յուստին. Պատասխ. ա: Կանոնք Նիկ. ա: Տերտուղ. յգ. Մխիթ.): Այսն ոչոյ սուրբ հայրն գովում է ամուսնութեան սրբութիւնը, և հաստատում է Պեարոս և Փիլիպպոս առաքեալներու սրինակներով՝ որք ամուսնացած էին և որդիք ունէին (Յաճախ. ը: ա. Տիմ. գ.):

## ՊԱՏԱՐԱԳԱՅՈՒԹԻՒՆ

Պահանջութեան ատիճանին կոչվում էին արժանա-

ուրնելը, երբեմն յայտնութեամբ (ա. Տիմ. գ. 14), վիճակով (Գործ. ա. 23, 26), նա և նորահաւատա հեթանոսացմէն որք փարժուած էին ճշմարիտ հաւատի մէջ (Գեմ. առ Կորն.) իսկ սովորականն էր եկեղեցւոյ համաձայն ընտրողութիւնը (Գործ. գ. 3—5), ընտրուածներու հաւատն ու վարքը նախ փորձում էին (ա. Տիմ. գ. 9, 10), և յետոյ առաքեալքը պաս պահելով և աղօթքով դնում էին ձեռքը նորընծայի վերա (Գործ. գ. 6: ԺԳ. 23: Տիտ. ա. 5), և կստուգ համար կոչուեցաւ ձեռնադրութիւն: Երբ որ քրիստոնէութիւնը տարածուեցաւ աշխարհքի երեսին՝ առաքեալքը ձեռնադրեցին եպիսկոպոսներ և սարք քահանայք, որ կատարեն ժողովրդեան հոգեւոր պէտքերը: Փոքր ժամանակ անցնելուց յետոյ սահմանեցին մեռոնի գործածութիւնը, զոր օրհնեցին առաքեալք և ուղարկեցին ամեն տեղ, որով եպիսկոպոսներուն և քահանայիցը օծում էին, ինչպէս դրում է ակատատես Դիոնեսիոս մատենագիրն (Գիրք բ. գլ. 7), և կանոն դրին, ,,որ չունենայ քահանայութեան օծումը, չհամարձակի քահանայագործութիւն անել (Կանոն 24): Հայոց եկեղեցին ունի օծումն, իսկ միւսները չունին:

## ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄՆ

Մերձ ի մահ հիւանդները, կանչում էին քահանայիցը աղօթելու և օծելու, որ իբրև լսումն ապաշխարութեան խորհրդի թողնին մնացած մեղքերը. և ովքեր որ հաստատուն հաւատով ապաւինում էին Աստուծոյ ողորմութեանը բժշկվում էին հիւանդութենից (Յակ. ԺԳ. 15): Այս բանի հիմքը տեսնում ենք Մարկոսի Աւետարանումը. ,,Եւ օծանէին ըզ բազում հիւանդս, և բժշկէին (Մարկ. գ. 13):

Վերջին օծումն ունենալով խորհուրդ ներելի մեղաց թողութեան կատարվում էր առանց խոստովանութեան, ինչպէս ունին միւս եկեղեցիք, ուստի ամեն մարդ դնելով իւր յոյսը նորա վերա՝ անխտիր գործում էր ամենայն մեղքերը (Տաթ.

հարց. եր. 604), վասն որոյ եկեղեցւոյ սուրբ Հաւք լաւ համարեցին իւղի չգործածելը, որ խորհրդին մէկ պակասութիւն չէ բերում, և Քրիստոսի խօսքին համաձայն՝ թէ ,,ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն և բժշկեսցեն,, (Մարկ. ԺԶ. 1.) սահմանեցին աղօթքներ, որ կոչվում է դի շեր ժամու աղօթք, և նրա հետ խոստովանութիւն, որ է ամենահարկաւորը, պատճառ, զի վերջին օծումը թողնում էր միայն ներելի մեղքերը, իսկ խոստովանութիւնը ներելին և մահացուն:

---

## ՏԷՐՈՒՆԵԱՑՆ ԱՂՕԹՔԻ

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

---

## ՕՀԱՑ ՄԵՐ ՀԱՅԵՐԳԱՀՈՐԴ

## ՏՈՒՐ ՄԵՌ ԱՅՍՕՐ

Առաջուայ գրուածքների մէջ ցոյց տուեցինք թէ ինչպէս ,,Եկեսցէ արքայութիւն Քո,, ասելով՝ Քրիստոս սովորեցնում է մեզ առաջ տալի բարձր, յաւիտենական ու հոգեկան բանը խնդրել Աստուածանից, և ապա նիւթականն է ուսուցանում խնդրել, որով մարդոյ միտքը կրկին յափշտակում է առ Աստուած, հաստատում է Նորա հայրութիւնը, և մեր որդիութիւնը, զի ինչպէս մեր հայրերը պահպանում են և խնամարկում մեզ, այնպէս էլ զիտենանք՝ որ երկնաւոր Հայրն տալի է մեզ խնամարկում ու պահպանում, ոչ թէ մեր մարմնական պիտոյքը միայն հոգալով՝ այլ և մեր հոգւոյ և մարմնոյ առողջութիւնը և զարգացումն պահելով: Եւ այն շաղկապը և յարաբերութիւնը որ ունէր Աստուած մարդոյ հետ և մարդս Աստուծոյ հետ, և պատուիրանազանցութենից յետոյ կտրուեցաւ՝ կրկին վերանորոգէ, վասն որոյ առաջ է կանչում մեզ դէպ ի Նորա որդիութիւնը՝ կոչելով Աստուծոյն ,,Հայր,, , ապա նախկին անմեղութեան վիճակն է յիշատակել տալի ,,Սուրբ եղիցի անուն Քո,, և յետոյ մեր

աստուածանման պատկերը ըստ իշխանականին է միաքներս գցում. ,,Եկեսցէ արքայութիւն Քո'' ապա յիշեցնում է մեր կամքի տկարութիւնը, որով ընկանք փառք ու պատուից և Աստուծոյ կամքին հնազանդութիւն է ուսուցանում, և յետոյ հեռաւեցնում է թէ ,,Օհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր'', և այս երկու պատճառաւ՝ նախ յիշեցնում է մարդուն պատուիրանազանցութենից առաջ ունեցած կերակուրը, զոր առանց վաստակի և հոգս քաշելու վայելում էր, որ էր գլխաւորապէս կենաց ծառը, որի պտուղը ուտելով պէտք է ճաշակել էր անմահ: Երկրորդ՝ միաք բերէ մեզ պատուիրանազանցութեան վնասը, որ զրկուեցանք այն անմահական հացից և այժմ գառն քրտնքով ենք վաստակում միայն մեր օրական հացը, և այն էլ՝ մեր ժամանակաւոր առողջութիւնը պահելու համար. և երրորդ՝ որ մարդս դարձեալ իմանայ թէ այս հաց տուողը Աստուած է, բայց մենք պէտք է աշխատի և ոչ թէ յոյս ունենալով այս խօսքի վերա պարապ նստի, պառկի, քնի և խնդրէ թէ Աստուած, մեզ հաց տուր. չէ, Քրիստոս չէ ուսուցանում ծուլութիւն, այլ թէ Աստուած է ամենայն բարութեանց տուողը և մենք ամենայն ժամ պէտք է աշխատինք և Աստուած այս մեր աշխատութեան մէջ տայ մեզ յաջողութիւն, որ կարողանանք մեր օրական հացը գտնել, միաք բերելով աստուածային վճիռը՝ թէ ,,քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քոյ'' (Ծնն. գ. 12). ահա և թռչունների համար ասաց թէ՝ ,,ոչ վարեն և ոչ հնձեն, և ոչ ժողովեն ի շտեմարանս և Հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա'' (Մատ. գ. 26): Բայց եթէ նոքա ուշք չդարձնեն և չփընտրեն իրանց կերակուրը՝ սոված կկուչեն և կկոտորուին:

Եւ այսպէս Աստուծոյ ամենայն բարութիւնը մեզ համար միշտ պատրաստ է, միայն մենք պարտաւոր ենք խնդրել, որ մեր բարի գործքերի մէջ յաջողութիւն տայ՝ որպէս զի կարողանանք մեր կեանքը ապահովացնել օրական ապրուստը ճարելով:

# ԵՒ ԹՈՂ ՄԵԶ ՕՊԱՐՏԻՍ ՄԵՐ ՈՐՊԷՍ ԵՒ ՄԵՐ ԹՈՂՈՒՄՔ ՄԵՐՈՑ ՊԱՐՏԱՊԱՆԱՑ։

Այս բանի ուսուցիչն չէ հասարակ մարդ, չէ՝ նա Մովսէս՝ որ ասաց ակն ընդ ական և ատամն ընդ ատաման, և ոչ թէ Եղիա, որ երեք տարի և վեց ամիս երկինքը կապեց վրէժ առնելու համար իրան հակառակորդներից և ոչ էլ սուրիշի նման, այլ Նորա քարոզածների միտքը և նպատակը չէր վրէժխնդրութիւն՝ այլ սէր, որից ծնւում է միութիւն, և սրանից ծագում է խաղաղութիւն և աշխարհաշէնութիւն, նոյնպէս և ուրիշ տեղեր էլ շատ այսպիսի սիրոյ խրատներ է ուսուցանում ,,Եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝ դարձո նմա և զմիւսն, և որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկ քո, թող նմա և զբաճկոն քո'' (Մատ. է. 39, 40)։ Սրանով սովորեցնում է ոչ թէ միայն համբերութիւն՝ այլ և ներողամիտ լինել և անյիշաչար դէպ ի յանցաւորը, և յանցաւորը մոռածելով իրա վատ արարմունքի վերա՝ այն ժամանակ կստիպէ նրան իրա խղճմտանքը, որ ներողութիւն խնդրէ նրանից, այս տեղ գեղեցիկ տեսարան է երևում այն մարդկանց մէջ, զի զրկեալն փոխանակ վրէժխնդիր լինելու կամ կռուելու, որից դուցէ և պատահէլ էր սպանութիւն, իսկ այժմ տեսնում ենք որ սիրով մէկմէկու համբուրում են և միանում են աւելի եղբայրական սիրով՝ թողնելով պարտքը։

,,Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց''։ Որովհետև մենք Աստուծոյն Հայր ենք կոչում և մեզ Նորա որդիք ենք համարում, ուրեմն ամենքս էլ եղբայր ենք, և այս եղբայրութեան կապը ի՞նչը կը-պահէ, եթէ ոչ սէրը, և ի՞նչով կլինի սիրել—երբ որ կթողնենք միմեանց յանցանքը, և յայնժամ Աստուած էլ կների մեր յանցանքներին։ Այս բանը Քրիստոս առակով իմաց ա-

բաւ, թէ ,,թագաւորին մէկը բաշխեց իւր ծառային բիւր քանքար պարտքը, բայց չար ծառայն, կասէ, միտք չբերեց իւր պարտքի թողութիւնը, և խեղդումէր իւր ընկերին պարտքի համար, թագաւորն իմանալով այս՝ բռնել տուաւ նորան մինչև որ իրա պարտքը բոլորը տայ'' : Այսպէս էլ մեր երկնաւոր Հայրը չէ ներել մեղքերս՝ եթէ մենք չներենք նախապէս մեր յանցանաւորներին (Մատ. ԺԸ. 28—35) : Եւ որպէս զի բոլորովին հաստատէ ամենքի մէջ եղբայրութեան սիրոյ կապը, վճռեց Պետրոսի հարցումը այս առարկայի վերա, ,,Տէ՛ր մինչև եօթն անգամ թողնեմ իմ եղբօր յանցանքը, եթէ մեղանչէ ինձ'' . Յիսուս պատասխանեց, ,,ո՛չ թէ եօթն անգամ, այլ 70 անգամ եօթն'' , այսինքն է 490 անգամ (Մատ. ԺԸ. 21, 22) : Եւ ի հարկէ շատ անգամ մենք ենք պատճառ լինում ուրիշներին դէպ ի մեղ մեղանչելու, և անդրադարձաբար, ուրեմն պէտք է թողնենք միմեանց յանցանքները և անյիշաչար գանուինք : Եւ ուրիշ քարոզութեան մէջ էլ կրկին սիրոյ հիմն է գցում, որի գլխաւոր վարդապետութիւնը հիմնուած է միանդամայն սիրոյ վերա, իբրև աշխարհաշինութեան և ընկերութեան կապի հիմոն վերա, և կամենալով հեռացնել ատելութենից և նախանձից՝ պատուիրեց ,,Եթէ մատուցանիցես զպատարագ քո 'ի վերայ սեղանոյ, և անդ յիշեսցես եթէ եղբայր քո ունի ինչ խէթ զքէն, թող զպատարագն քո առաջի սեղանոյն, երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո'' (Մատ. Է. 23, 24) : Այս տեղ սէրն է միտքը գցում, չէ ասում եթէ դու ունիս ուրիշի հետ նախանձ, այլ եթէ քո եղբայրն ունի քեզ հետ, առաջ գնա հաշտիր, որ քո պատարագն ընդունելի լինի : Զէ՞ որ աղօթքն էլ պատարագ է, որ մեր սրտից բղխած օրհնութիւնը նուիրում ենք Աստուծոյն, և մեր խրնդիրքը տալիս ենք 'Սրան, եթէ անբան պատարագը չէ ընդունում առանց հաշտութեան, ուրեմն բանաւոր պաշտօնը և աղօթքն էլ չի ընդունի առանց հաշտութեան, հապա այս

խնդիրը ոչինչ գործութիւն չունի, եթէ մեր սրտից չենք հանել նախանձը, և ի՞նչ երեսով կասենք ,,Աստուած մեզ զպարտիս մեր՛՛: Մտածի՛ր ո՛վ մարդ, թէ ի՞նչ ես խնդրում քո Արարչից, նախ դու թողութիւն տուր քո եղբօրը, որ դու էլ նոյնը գտնես Աստուածանից, և ապա համարձակ ասա՝

## ԵՒ ՄԻ ՏԸՆԵՒ ՀԱՄԵՍ Դ՚ ՓՈՐՁՈՒԹԻՒՆ, ԵՅԼ ՓՐԿԵՍ ՀԱՄԵՍ Դ՚ ՁԱՐԻ

Մեր երկնաւոր վարդապետն ուսուցանում է Աստուածանից խնդրել, որ մեզ փորձութեան մէջ չձգէ, այլ փրկէ, բայց փորձութիւնը երկու տեսակ է, մէկ՝ որ Աստուած երբեմն Ինքն է փորձում իւր ընտրածներին, շատերը կարելի է ասեն թէ՝ Աստուած միթէ չէ իմանում ինչ որ պէտք է լինի, էլ ի՞նչի է փորձում: Այո՛ այդ հարցմունքը մեր դատողութեամբ համարում ենք իրաւացի, վասն զի Աստուած ամենագէտ է և ամեն բան գիտէ, այլ ինչպէս որ մենք մեզ հաւատարիմ բարեկամներին փորձում ենք, ցոյց տալու համար ուրիշներին մեր սիրոյ շաղկապը, այսպէս էլ Աստուած փորձում է իրա ընտրածներին, ինչպէս Աբրահամին, Յովսէփին, Յորին և ուրիշներին: Թէպէտ Աստուած գիտէ նոցա կատարեալ հաւատը, յոյս և սէրը դէպ ի Ինքն, բայց ժողովրդեան ցոյց տալու համար նոցա հաւատարմութիւնը, որի համար վարձատրել է և օրհնել, և միւսները իրանց ընթացքը ուղղեն և հաւատ ունենան դէպ ի Արարիչը: Երկրորդ՝ Քրիստոս այս խօսքերով ուսուցանում է մեզ գիտել դէպ ի երկնաւոր Հայրը աղաղակելով՝ թէ ո՛վ Աստուած, մենք լինելով ակար, չենք իմանում ամենայն բանը, վասն որոյ աղաչում ենք, որ մեր ամենայն բարի գործքի մէջ Քո ամենակարողութեան ձեռքը և ողորմութեան ու պահպանողութեան աչքը ունենաս, որ մեր բարի գործքի թշնամիքներից ազատես, որ փորձութեան մէջ չընկնինք, և Աստուած չէ փորձում մարդոյն գցելով չար

բանի մէջ, ինչպէս ասում է Պաւղեսը ,,Մի՛ ոք որ 'ի փորձութեան ելցէ, ասասցէ թէ յԱստուծոյ փորձիմ, զի Աստուած անփորձ է չարաց, և փորձէ Նա ոչ ոք'' (Յակ. 13) և յիշեցնում է մեզ մեր նախաստեղծների փորձութիւնը սատանայից, որպէս զի այսուհետև պահենք մեծ զգուշութիւն որ աշխարհիս վերա շրջապատած են մեզ ամենայն փորձանքներ, և միշտ աղօթքի լինինք՝ որ փորձութեան մէջ չընկնինք ,,Արթուն կացէք և աղօթս արարէք, զի մի՛ անկանիցիք 'ի փորձութիւն'' (Մատ. իզ. 41) վասն որոյ և հեռևեցնում ենք, ,,այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ'', այսինքն սատանայից, որ մեղքի և նորա որոգայթների մէջ չընկնինք, այլ տայ մեզ զօրութիւն որ կարողանանք ամենայն չարութեանց յաղթել և արդարութեամբ երևալ Նորա սուրբ երեսի առաջ։

## ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ՕՁՕՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՓԱՌՔ ՅԱՐԻՏԵՍՆՍ ԱՄԷՆ։

Քրիստոս երբ որ սովորեցրեց իրա կարճ և ազգու աղօթքը և բոլոր հոգևոր և մարմնաւոր պիտոյքները խնդրել տալով՝ ամենայն երկիւղ հանեց մեր սրտից, ապա քաջալերում է և զարթեցնում է մեր միտքը թագաւորի յիշատակով, որ մենք միշտ պատրաստ լինինք ասաքինութեան գէնքերով պատերազմելու մեր հոգւոյ և մարմնոյ թշնամեաց դէմ, և թէ այդ բանի կարողութիւն տուողը և զօրութիւն ունեցողը Ինքն Աստուած է՝ ասելով ,,Զի Քո է արքայութիւն և զօրութիւն և փառք''։ Եւ եթէ Նրանն է թագաւորութիւնը ուրեմն ոչ ոքից չպէտք է վախենալ, պատճառ որ ոչ ոք չկայ Նրան հակառակող, և թէպէտ երևում է թէ կայ մէկ բան հակառակ, գիտենաս որ Աստուծոյ թոյլ տալով է առ ժամանակ, որովհետև չարը մինչև անգամ խոզերի մէջ չկարողացաւ մնալ առանց թոյլատրութեան, ուրեմն ո՞ւրչափ ևս ա-

ռաւել մարդոյ մէջ, թէպէտ շատ անդամել տկարանաս, սա-
կայն պիտի քաջալերես քեզ, որ այնպիսի գործաւոր թագաւոր
ունիս և որ կարող է ամենայն բան պատրաստել քո համար։

,,Եւ փառք յաւիտեանս. ամէն'' ոչ միայն շրջապատած
չարերից է ազատում, այլ և փառաւոր է կացուցանում, զի
ինչպէս մեծ է Նորա գօրութիւնը, նոյնպէս անթիւ է և
փառքը յաւիտենից յաւիտեանս։

Աբգար Տ. Յակոբեանց։

## ԸՆՑԱՂՈՒԱԿԱՆՈՒՆ ՈՒ ՀՈՒՆԸ

Իրիկնադէմին մէկ գրաղ քուչով
Երկու մարդ իրար հետ գրից տալով՝
Ընց էին կենում. մէկ էլ էն տեսան,
Դռան շէմի տակիցն մէկ շուն հէնց բիրդան
Ծողրդաց, իսկոյն վեզվեզալ սկսեց։
Էս ձէնի վրայ սաղ քուչէն լցվեց,
Յիսո նից աւել՝ շներ մօտ էլան.
Մեր անցվորների գլուխը տարան։
Մէկը կտացաւ՝ որ քար վերցնի,
Միւսը ձեռիցն բռնեց ընկերի.
,,Սիրելի՝ ասեց՝ տեղը ծանր կա՛ց,
Հան փէշակն ա, որ հաչի հանապագ։
Քարով դու շանը ճամբայ չես բերիլ,
Թէ չես ուզում նրանց դհայ կատաղացնիլ,
Գլխներս առնինք, գնանք մեր բանը.
Թէ չէ քար քցիլն ի՞նչ կօգտի շանը''։—
Իրաւ մի քիչ տեղ որ չի հեռացան,
Շներն էլ անտաս քաշվեցին բիրդան։
Ներանը պատռած հայվարայ մարդի
Փէշակն էն ա, որ մեզ վրայ հաչի։
Բայց դու քո ճամփէն՝ դուզ բռնի, գնա՛,
Կհաչի, կհաչի, էլ եդ կդինջանայ։

# ՍՏՈՐԵԳՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍՈՅ

## Գ. ՀՈՒՇԵՐԸ, ՓՈՂՈՑՆԵՐԸ ԵՒ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԸ

Թիֆլիսը այս 6 տարուայ մէջ չկարաց ունենալ միաստեսակ քուչէք, և անկարելի է, ըստ որում հին քաղաքը շինուած լինելով քարափի դօշումը և նոյն իսկ բերդի պարսպների վերա, և դարիվրուս ու դարիվէր լինելու համար նոր ձև տալը դժուարին է, թէ և լայնացնեն էլ, սակայն կառքեր և սայլեր չեն կարող շրջել այն բարձրութեան վերա, ուստի թողած են մի և նոյն քուչէքը և քուչաբանդները, իսկ հարթ ու հաւասար տեղերում, նոյնպէս և շրջակայքում թողած են լայն և ընդարձակ քուչէք, և 1861 թուից սկսած քարումն բոլոր քուչէքը, որով աւելի է պայծառանում քաղաքը և անձրևային ժամանակ ժողովուրդը ցեխից նեղութիւն չի քաշել։

ՋՐԱՆՑՆԵՐ։ Թիֆլիսը ունենալով հարաւից և հիւսիսից սարեր, եթէ չէր ունեցել ջրանցներ, հեղեղի ժամանակը ողջ տները և դուքանները կլցուէին, և մեծ վնաս կտային, ինչպէս երբեմն էլ պատահում է, երբ շարունակ մեծ անձրև է գալիս, պատռվում է Սօլօլակի գլխից ջուրը, և ջրանցը չբաւականանալով տանել, պատռվում է կէսը դէպ ի բաղաղխանէն, կէսը դէպ ի Երևանսկի պլոշչադը և մեծ վնաս է տալիս՝ լցուելով տները և դուքանները, մինչև անգամ քըշում էր դէպ ի գետը շինութեան նիւթը, կառքեր, մարդիք, ձիաներ, տաւարներ և այլն. նոյնպէս էլ միւս թաղերումն էր պատահում։ Այժմ Սօլօլակի գլխին այնպիսի ամուր ջրանցք

է շինած, որ էլ ոչինչ ահ չունի։ Ջրանցներն են՝ 1) Աւանենց խէվը (փոս, ձոր) սկսած Յօլօլակից մինչև գետը թաղով ծածկած է. 2) Դարաբանէն. 3) Մթածմինդի խէվ կամ Ալաբօղսկի՝ Տափեթաղումը. 4) Աղուռխանի խէվ, նոյն կողմը. 5) Սպասսկի Հալաբարումը, թաղով ծածկած. 6) Շաւի գեղի խէվ. 7) Միրզոյենց և Մանիշակի տախտի խէվերն՝ Խարբուխի գեղումը. 8) Կրծանիսի խէվ. 9) Ծիրանաւորի խէվ. և 10) Դօլաբաւոր՝ Նաւթլուխի գլխին։

ԿԱՄՈՒՐՋՆԵՐ։ Կուր գետի վերա կայ չորս կամուրջ, որ միաւորումն թիւֆլիզը Կուկիու, Հալաբարու և Նաւթլուխի հետ, յորոց երեքն են փայտէ և չորրորդն քարուկրէ։ 1) Ալրաց թաղաւորութեան ժամանակին մէկ հատ կամուրջ կար Մէկէխի և Մէչիսի մէջ տեղը, թէպէտ նորոգուեցաւ 1845 թուին, բայց էլի հին կամուրջ է ասվում։ Այս կամուրջը Ալրաց թաղաւորութեան ժամանակին շատ նեղութիւններ է տեսել. եթէ թշնամին Հալաբարի կողմից է գալիս եղած՝ երելէն, որ քաղաքը ներս չմտնի, եթէ քաղաքից փախչելիս են եղած՝ երել են, որ թշնամին ետևից չը գնայ։ 2) Նրանից փոքր ինչ բարձր Շադիեանց և Ղօլախի քարվանսարերու մէջ է փայտէ Նոր կամուրջն՝ շինուած 1823 թուին։ 3) Հայակապ և քարուկրէ կամուրջն հիմնարկուած 1847 թուին Փոխարքայ Կնեազ Ալօրնցովից, որ և նրա անունով կոչվում է „Միխայիլովսկի մոստ“ (Միքայէլեան կամուրջ), որի երկայնութիւնն է 560 ոտն, իսկ լայնութիւնն 20, կամուրջի երկու կողմի երկայնութեամբ են չուգունի մուհաջարներ, և շատ լապտերներ (ֆանարներ), որ գիշերը վառվում են, նոյնպէս և կրպակներ, որ շինել են ազնիւ Միրզոյեանք. և 4) կամուրջն է Տամաժնայի մոստ անուանեալ „Մենացականեանցի“ 1851 թուին։ Այս կամուրջը շինեցին Նեմեցները՝ այն պայմանաւ, որ մինչև 10 տարի ինչ որ ոչխար ու տաւար, ձի ու ջորի և սայլեր անցկենան, հարկ տան, այսինքն մինչև իրանց ծախս արած գումարի լրանալը, և ապա

լենի ազատ անցուդարձը։ Այս որ իմացաւ Հայազգի բարեպաշտ քաղաքացի Յովհաննէս Մինասեան Մնացականեանց, շարժելով ջերմեռանդութենից տաւ նրանց տրած ծախսը և այդ նոր հարկից ազատեց հասարակութիւնը և իրա անունով կանչեց ,,Մնացականեանցի կամուրջ'' որի արևելեան կողմը շինել տաւ կրպակներ, զի վարձը ժողովելով պէտք ածեն կամուրջի նորոգութեան համար։ Իսկ արևմտեան պատի վերա ունի մակագրութիւն այսպէս՝ ,,Կամուրջս այս շինեցաւ արդեամբք Տփխիսայ քաղաքացի Հայ Յովհաննու Մինասեան Մնացականեանց 'Ի յիշատակ հայրենակցաց իւրոց 'Ի թուին Հայոց ՌՅ'' (1851)։

Բացի այս կամուրջներից կան և մանր քարուկրկ կամուրջներ ջրանցքների վերա, 1) Դաբախանի, 2) Կրծանիսի խէվի վերա, որ կոչւում է ,,Միրոյի կամուրջ և 3) Ալէրայի։

## Դ. ԱՅԳԻՐ

Թիֆլիզու շրջակայքումը կան շատ այգիք, որք գտնըվում են, Դրսիծալա, Օրթաձալա, Կրծանիս, Դիդուբա և Ալէրա, և այժմ Թիֆլիզ քաղաքի հաշուումն են։ Սրանց մէջ երևելիքն են 1) Փոխարքայի տան կից այգին տնկած Անգլեացւոց ձևով, ունի մեծ հաւուզ, անցքերի վերա մանր կամուրջներ, ամենայն անցուդարձի երկու կողմը կան երկար աթոռներ։ Սրա մէջ տնկած են անտառի և մրգեղենի ծառեր, նոյնպէս խաղող և զանազան տեսակ ծաղիկներ։ 2) Սրա նման է և թագաւորական այգին անուանեալ Ռոստանիշէսկի (տնկաբանական այգի), Նարիզալի բերդի հարաւային պարսպի տակը, սրա ջուրը գալիս է Ծաւկիսից։ Այս այգին պատկանում էր Ալրաց թագաւորներին, և ինչպէս աւանդութեամբ ասում են, տնկել է Թամար թագուհին, որ թագաւորեց 12 դարում, դրութիւնը թէպէտ բարձր ու ցածր է, լաւ որում քարափի վերա է, սակայն եւրոպական ճարտարութեամբ է շինուած ճանապարհները, որ

զբօսնողը նեղութիւն չէ քաշում, սրա մէջը կան ծիրանի, թըթի, նշի, նռան, թզան, սերկևիլի, շլորի, խնձորի, ֆըն-դըղի, բալի, սև բալի, տանձի և ուրիշ ծառեր, շատ ընտիր վաղներ, ակացի և մացառներ, զանազան տեսակ վարդեր և բոյսեր, ունի և առանձին ծաղկոց: 3) Ա ւ ա գ խ ա ն ի այգին որ է Աուր գետի հիւսիսային կողմը դաշտ տեղ, Դիպուրուսին: Սրանից մեծ այգի չկայ, որի անցուդարձը այնչափ լայն է, մինչ զի կառքեր են մտնում գալի, ամեն տեսակ ծառեր գտնվում են նրա մէջ, ունի առանձին մեծ առու հանած Աուր գետից: Այս այգին տնկեց Ղ ևերալ Մ այեօր Մ ուշտէյիդը նրանից առաւ Ա ւագխանը Մ էհրաբեանց, նրանից էլ առաւ գանձարանը, և հիմայ է հասարակաց զբօսարան, որի մէջ կան կրպակներ ուտելիքի և խմիչքի: Իսկ միւս այգիքը, ո-ր-ոց մեծ մասը պատկանում է Հայոց, անկած են ասիական ձևով, նրանց մէջ կան վերոյիշատակուած ծառեղէնները, իսկ վագները իգու պէս չեն, այլ թալարներով են, և նրանց տա-կի գետինը ամենայն տարի բահում են, որ մէկ թիզ դար-տակ տեղ չկայ: Գետնի բերքերն են՝ վարունգ (խիար) տակ (ճարխալ), դթում, լոբիա, ֆասոլ, իսպանախ, սոխ, սրխ-տոր, բոզկ, ամնաբոզկ, գազար, բազրիջան, բակլա, ծոթ-բին (քօնդար), տարխուն, ծիծակի, և կանանչի (սաւզի), այժմ սկսել են տեղ տեղ ցանել բամեա, կանգաս (արտիշօկ) և ուրիշ տեսակ Եւրոպացուց բոյսեր: Այգեպանները մեծ վաստակ ունին, պատճառ որ բաւական թանգ գնով են ծա-խում, Պարսկաստանից եկած շոր մրգեղէնը էժան է, քան թէ էստեղինը: Մրգեղէնը, դեռ չհասած խակ խակ բե-րում են շուտով ծախելու և շատ լաւ գնով էլ ծախում են, մանաւանդ խիարը, նոր վախտը մէկն երկու շահով, սրանից յառաջանում է փորահարութիւն, պատմում են, թէ, երբ ազնիւ Մ կրտում Աուրդունեանցը նացվալ էր (բազար բաշի) և մայեօր Լ էվինցոֆն էլ կամէնդանտ՝ Թիֆլիզում շատ էժա-նութիւն էր, եթէ տեսել էին թանգ ծախելիս, կամ մրգեղէնը

խակ է, կամ փթած է կամ քացեած է, դուքանը կողոպտել կտային, կամ ջուրը կածել կտային։ Սրանց պես բաները քաղաքի օգուտի համար շատ են, միայն երկուսը պատմեմ, —մէկ օր կամենդանատը, որ կենումէր Կաթուղիկէ եկեղեցու սրահումը, բալի է առնել տալի, և տեսնում է որ խակ է, շուտով բաղկալին կանչում է, և բարկանալուց յետոյ վերևից թափում է գետնի վերա բալին, հրամայում է բաղկալին որ հաւաքէ, իսկ դազախին՝ մինչի հաւաքելը զամշով ծեծէ միջքին, էնչափ է խփում դազախը, մինչև որ սիրտը մղկըտում է և ծածուկ ասում է թէ ՇՃՏՐ. ՇՃՏՐ. (փախի՛, փախի՛,) բաղկալը փախչում է և պրծնում։ Լսատուր համար անունը դրել էին չար կամենդաթ։ Մէկ օր էլ, գիւղացուն մէկը աւանակին բեռնած ցախ է բերել ծախելու և կանգնեցրել է բազարումը։ Բեռնին երեք շահի են տալի, և տէրը չէ տալի, նացվալ Մկրտումը տեսնում է, որ կէսօրը մօտկացաւ խեղճ աւանակը բեռը շալակին քաշած կանգնած է, իսկոյն հրամայում է մշակներուն, որ վերածեն ցախը, և դնել է տալի տիրոջ շալակին, ասելով՝ թէ ,,անխղճմտանք, ասենք թէ, հայվան է, լեզու չունի, մեղք չէ՞ որ, էսչափ ժամանակ բեռան տակը չարչրում ես, հիմի փորձէ՛ դուն"։

## Ե. ԵԿԵՂԵՑԻՐ և ՄԷՋԻՏՐ

Թիֆլիզումը իւրաքանչիւր ազգ ունի իրա աղօթարանը, որոց մէջ ամեն մէկը կատարում է իւր հաւատի ասատուածպաշտութիւնը հրապարակաւ և ազատ, որք են՝

### Ա. ՈՒՈՒՍԱՑ

| | |
|---|---|
| Աւագ եկեղեցի . . . . . | 1 |
| Ծխական . . . . . | 15 |
| Օջնորական (կօրպուսնի) . . . | 2 |
| Պերեդմնոտան . . . . . | 2 |

Բացի սրանից կան և անեռումը առանձին աղօթատե-

ղեք, ինչպէս՝ Փոխարքայի, Էկզարխի տանը, Գրիմնազիայի, աղջկանց ուսումնարանի, և բերդումը։

## Բ. ՀԱՅՈՑ

| | |
|---|---|
| Հաղ Եկեղեցի* . . . . . | 1 |
| Աթոռանիստ** . . . . . | 1 |
| Ծխական . . . . . | 17 |
| Ուխտատեղի*** . . . . . | 1 |
| Կուսանոց . . . . . | 1 |
| Գերեզմանատան . . . . . | 2 |
| Բերդումը . . . . . | 1 |

## Գ. ԼՈՒՏԵՐԱԿԱՆԱՑ

| | |
|---|---|
| Ժողովարան. . . . . | 2 |

## Դ. ԿԱԹՈՂԻԿՆԵՐԻ

| | |
|---|---|
| Ծխական . . . . . | 1 |
| Գերեզմանատան . . . . . | 1 |

## Ե. ՄԷՋԻԹՆԵՐ

| | |
|---|---|
| Հիայի . . . . . | 1 |
| Սունլի . . . . . | 1 |

## Զ. ՀՐԷԻՑ

| | |
|---|---|
| Ժողովարան. . . . . | 1 |

---

* Հաղ եկեղեցին է արքեպիսկոպոսարանն, ուր է և կոնսիստորն։

** Աթոռանիստն է Կաթուղիկէ եկեղեցին, ուր նստում էր Հաղբատայ առաջնորդը, և նրա թեմն էր ողջ Վրաստանը և ապա 1815 թուին միացաւ Էջմիածնայ վիճակի հետ և վերջացաւ Հաղբատայ առաջնորդութիւնը։

*** Թիֆլիզում չորս եկեղեցիքը, որք են Կաթուղիկէ, Ռեդդեհեմ, սուրբ Կարապետ և սուրբ Սարգիս, են ուխտատեղիք, բայց ունենալով առանձին ծուխ, հաշուած են ծխական եկեղեցեաց թիւումը, իսկ Արծանիստու Ծիրանաւոր սուրբ Աստուածածնայ եկեղեցին չունենալով ծուխ՝ է առանձին ուխտատեղի։

# ՄԱՆԿԱԿԱՆ ԱՁԽԱՐՀ

## ՀԱՏՈՒԱԾ I։

## ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄԸ. ՆՈՒԻՐԱԾ ՓՈՒՆՋԸ։

### Մանուկները անտառումը։

1։ Երկու մանուկ, քոյր ու եղբայր, ճանապարհ ընկան գէպ 'ի ուսումնարան։ Սրանք մի դալին անտառով պէտք է անցկենային։ Ճանապարհին շոք էր և թօղ, բայց անտառի մէջը հով էր և զուարճալի։

,,Գիտե՞ս արդեօք ինչ կայ'' եղբայրը իրան քրոջը ասաց. ,,դեռ վաղ է, մենք յետոյ էլ կարող ենք ուսումնարանը գնալ։ Մի ուսումնարանի մէջը շնչառութեան համար ծանր է և ձանձրալի, բայց անտառի մէջը պէտք է որ շատ ուրախալի լինի։ Լսի՛ր ինձ, էնտեղ թռչունները ի՞նչպէս ձայներ են հանում, իսկ առնէտը ճիւղերի վերայ ի՞նչպէս թռչկոտում է։ Եկ, իմ քոյրիկ, ինչ որ կլինի, մենք էնտեղ գնանք''։

2։ Եղբօր առաջարկութիւնը խիստ դուր եկաւ իրան քրոջը։ Մանուկները խոտի մէջը այբբենարանը վեր դցեցին, ձեռք ձեռքի տուին և կանանչ թփերի մէջը ծածկվեցին, ոստալից կեչի ծառերի տակին։ Ընտառումը էնպէս ձայներ էին դուրս դալիս, որ լսողը ուրախութիւնով զմայլվում էր։ Թռչունները անդադար թռչկոտում էին մէկ տեղից միւս տեղը,

երգումէին, ծլվլացնումէին և ձայներ էին հանումէ, առնէանները ճիւղերի վերայ թռչկոտումէին, միջատներն էլ խոտի մէջը ղժվժում, սողումէին:

3: Մանուկները առաջին անգամը մի ոսկեբզէգ տեսան: ,,Մեզ հետ խաղացի՛ր'' մանուկները բզէգին ասացին:—Ուրախութիւնով, պատասխանեց բզէգը, բայց ես ժամանակ չունիմ. ես պէտք է ինձ համար ճաշ պատրաստեմ:

,,Մեզ հետ խաղացի՛ր'' մանուկները դեղին և մագոտ մեղրաճանճին ասացին:

—Ես ժամանակ չունիմ ձեզ հետ խաղալու, պատասխանեց մեղրաճանճը. ես պետք է մեղր շինեմ:

,,Դու էլ չե՞ս խաղալ մեզ հետ'' մանուկները մրջիւնին հարցրին: Բայց մրջիւնը ժամանակ չունէր նրանց լսելու. նա իրանից երեք անգամ մեծ ծղնօտ էր տանում և շտապում էր մեծ ճարտարութիւնով իրան տունը շինելու:

4: Մանուկները պէտք է յետ դառնային և կրկին առնէտի մօտ գային առաջարկելու, որ նա իրանց հետ խաղայ, բայց առնէտը թափ տալով իրան խաւոտ պոչը, պատասխանեց, որ ինքը պէտք է ընկոյզից պաշար պատրաստի ձըմեռուայ համար: Աղաւնին ասաց. ,,ես իմ փոքրիկ ձագերի համար բոյն եմ շինում'': Մոխրագոյն փոքրիկ նապաստակը վազումէր առուակի մօտ իրան դունչը լուանալու: Մորու (եղակ) սպիտակ ծաղիկը նոյնպէս ժամանակ չունէր մանուկների հետ պարապել. որովհետև լաւ եղանակ էր արել, նա շտապումէր համեղ պտուղ պատրաստել:

5: Մանուկները սկսեցին ձանձրանալ, որ բոլորը իրանց գործքովը պարապած են, և ոչ ոք չի կամենում նրանց հետ խաղալ: Նրանք վազեցին առուակի մօտ: Քարերի վերայ խողխոջալով, քչքչալով, առուակը անուտոտովը վազումէր:

,,Աղդին հաւատալի է թէ դու ոչինչ գործ չունիս'', մանուկները նրան ասացին. ,,ուրեմն խաղացի՛ր մեզ հետ'':

—Ի՞նչ, միթէ ես պարապ եմ մնացել, խողխոջաց բարկա-

ցած առուակը. ա՞խ, դուք, ծոյլ մանուկներ:

Այլեցէք իմ վերայ, ես գիշեր ու ցերեկ աշխատումեմ և մի ըոպէ էլ հանգստութիւն չունիմ: Մի՞թէ ես չեմ, որ մարգիանցը և կենդանիներին ջուր եմ տալիս: Բայց 'ի ինձանից, ո՞վ է շորեր լուանում, ջրաղացների չարխերը ո՞վ է պտտում, նաւերը դէս ու դէն տանում և հրաձգութիւնները հանդցնում: Ո՜հ, ես էնքան գործ ունիմ, որ գլուխս պտտվումէ. աւելացրեց առուակը և սկսեց կրկին քարերի վերայ խողխոջալ:

6: Մանուկները սկսեցին աւելի ձանձրանալ և նրանք մըտածեցին, որ լաւ կլինէր, եթէ առաջ ուսումնարան գնային, և ուսումնարանիցը յետ գալու ժամանակը անտառը մտնէին:

Բայց էդ միևնոյն ժամանակը մանուկը նկատեց, որ կանանչ ճիւղի վերայ մի սաստիկ փոքրիկ և գեղեցիկ թռչուն կայ նստած. նա նստած էր, թռչումէր, թէ հանդարտ և ոչինչ չգործելուցը քաղցր ծլվլացնումէր:

,,Էյ, դու, ուրախալի երգիչ'' ձայն տուեց մանուկը թռչունին. ,,արդէն երևումէ թէ, դու էլ մեզ նման ոչինչ գործ չունես. արի՛ խաղացի՛ր մեզ հետ:

—Ի՞նչ, ծլվլացրեց անպատված թռչունը. մի՞թէ ես պարապ եմ մնացել: Մի՞թէ ես ողջ օրը մեղ (մոծակ) չէի որսում, որ իմ ձագուկներիս կերակրեմ: Ես էնպէս դադրել եմ, որ չեմ կարող թևերս բարձրացնել, և հմի իմ փոքրիկ ձագուկներին երգելով քնացնումեմ: Բայց դուք էս օր ի՞նչ էք արել, փոքրիկ ծոյլեր: Ուսումնարան չգնացիք, ոչինչ չսովորեցիք, վազվզումէք անտառումը, և ուրիշներին էլ արգելում էք գործ գործել: Լաւ կանէք, որ գնաք էնտեղ, ուր որ ձեզ ուղարկել են, և իմացէ՛ք, որ միայն նրան է ախորժելի հանդըստանալ և խաղալ, ով որ աշխատել է և էն բոլորը գործել է՝ ինչ որ պարտական էր գործելու:

Մանուկները սկսեցին ամաչել. նրանք գնացին ուսումնարանը և թէպէտ ուշ եկան, բայց ջանասիրութիւնով սովորեցին:

# ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ։

## ԳԼՈՒԽ II։

### Ուսումնարան։

1։ Երկուշաբթէ առաւօտը Յովհաննէսը և Նիկողայոսը շատ վաղ կարթնեցին։ Հասապելով նրանք վերկացան, հագնվեցին, Աստուծուն աղօթք արին և նախաճաշիկ արին։ Մանուկները արդէն վաղուց էին սպասում էն օրին, երբ պէտք է նրանք առաջին անգամը ճանապարհ ընկնէին դէպ 'ի ուսումնարան. վերջապէս էդ օրը վրա հասաւ։

,,Զեզ էնպէս վարեցէ՛ք, ինչպէս կպատկանի բարի և խելօք մանուկներին. ուսուցչին լսեցէք և ջանասիրութիւնով սովորեցէ՛ք'', Յովհաննէսին և Նիկողայոսին ասաց նրանց բարի մայրը, և Աննայ խոհարարուհուն հրամայեց, որ նրանց ուսումնարանը տանի։

2։ Մի կէս ժամից յետոյ Աննան մանուկների հետ մի մոխրագոյն և երկար տան մօտ կանգնեց։ Լուսամտներիցը աւելի բարձր, մի մեծ և սև տախտակի վերայ, Յովհաննէսը մի խոժոռ վերնագիր կարդաց. ,,Ուսումնարան''։ Դեռ ևս վաղ էր։ Ուսումնարանի դուռը փակած էր։ Աննան զանգակը քաշեց։ Ալևոր, բեղերաւոր ծերունին, զինուորական հանդերձով, դուռը բաց արաւ։ Էդ պահապան Գրիգորն էր։ Պահապանի ձեռին մի մեծ աւելի և մի ջնջան կար։

,,Էդ ի՞նչ վաղ'' նա հարցրեց. բայց նկատելով, որ դրանք նորեկներ էին, աւելացրեց. ,,դասատուութիւնները ժամի ութին են սկսվում, բայց հմի միայն ժամի եօթն է. պէտք է դուք սպասէք, աղաւնեակներս''։

Մանուկները Գրիգորի եռևիցը նախասենեակը մտան, ուր պատի վերայ մեխած էր շորեր քաշ անելու համար մի երկար կախարան բազմաթիւ ցցերով։

Աննան մանուկների շորերը հանելուն օգնեց, խոստա-

ցաւ նրանց ետևիցը գալ, երբ դասատուութիւնները կվերջանան և շուտով վազեց դէպ 'ի փողոցը ուտելիք առնելու համար:

3: Գրիգորը մանուկներին դասատուն տարաւ, նրանց ասաց, որ նրանք մի աթոռի վերայ նստեն, միայն թէ հանդարտ, իսկ ինքը սկսեց տախտակամածը, կամ ինչպէս որ ասում ենք, պօլը սրբել: Դասատան մէջը բաց 'ի Գրիգորից, Յովհաննէսից և Նիկողայոսից, դեռ ոչ ոք չկար:

Մանուկները մի աթոռի վերայ նստելով, նայում էին ամոթով իրանց համար անծանօթ առարկաների վերայ: Էն սենեակը, որ դասատուն էր համարվում, մեծ էր և բարձր: Մանուկները համարեցին, որ էն սենեակը երեք դուռը ունի և վեց լուսամուտ: Պատերը դեղին էին, օճաքը (առաստաղ) իսկակ սպիտակացրած էր, բայց տախտակամածի վերայ արդէն շատ թանաքի բծեր կային: Մի անկիւնում մի մեծ վառարան էր շինած, իսկ միւսում նրա դէմը, Արրի պատկեր էր քաշ արած:

4: Մանուկները բաղմաթիւ երկար սև աթոռների վերայ ամէնից շատ էին զարմանում: Դասատան մեծ մասը նրանցով էր բռնված: Աթոռները և սեղանները շարքով դրած էին: Էդպիսի հաջաթ Յովհաննէսը և Նիկողայոսը իրանց օրում չէին տեսել: Աթոռներ սեղանների հետ կպած էին շինած, սեղանների երեսները դարիվեր էին (դառ 'ի վայր), երեսների տակին — արկղներ կային. բայց սեղանների վերայ մեծամեծ արձիձեայ թանաքամաններ կային շինած, ուր Գրիգորը հէնց էն րոպէին նոր թանաք ածեց: Դէմ դէմ մի փոքր բարձրութեան վերայ, դրած էին մի աթոռ և մի սեղան, շատ կարելի է թէ ուսուցչի համար էին. բայց սեղանի մօտ երեք բարձր ոտների վերայ մի մեծ սև տախտակ կար: Տախտակի վերայ դեռ էլի կաւշի (մէլ) հետքերը երևում էին:

5: Գրիգորը տախտակամածը սրբեց, աթոռների և սեղանների թօզը սրբեց և իսկակ իսկակ դասատան տախտակը մաքրեց: Յետոյ նա բերեց մի քանի կտոր կաւիշ, սպունգ

(բուբկայ), ջնջան և գնաց միւս դասատունը սրբելու։ Դուրս գնալով Գրիգորը, դուռը բաց արաւ և մանուկները տեսան, որ միւս սենեակի մէջը բոլորը մի և նոյն էր. աշակերտների համար երկար և սեւ ափոռներ, ուսուցչի համար ամբիոն, դասատան տախտակ և միայն աւելին էն էր, որ պատի վերայ մի աշխարհագրական քարտէզ կար կախ արած։

## ԳԼՈՒԽ II։

### Ընկերները և Ուսուցիչը։

Յովհաննէսը և Նիկողայոսը երկար ժամանակ մենակ չմնացին։ Շուտով զանգակի բարձր ձայնը հնչվեց։ Գրիգորը դուռը բաց արաւ և ազատակելով ու ձայն արձակելով մանուկները դասատուն վազեցին։

,,Ահա՛ նորեկներ, նորեկներ՛՛. ամեն կողմից լսվում էր։ Այդ միևնոյն րոպէին մեր բարեկամներին աշակերտները շրջապատեցին և սկսեցին զանազան հարցեր տալ. ,,դուք ո՞վ էք, ի՞նչ է անուններդ, քանի՞ տարեկան էք, ո՞ր տեղ էք կենում, կարդալ և գրել գիտէ՞ք թէ ոչ, ո՞ր դասատունն էք մտնելու՛՛։

2։ Յովհաննէսը և Նիկողայոսը չկարողացան պատասխան հացնել։ Նրանք երբէք էպիսի շատ մանուկներ չէին տեսել, և նրանց սրտերը թուլացան, մանաւանդ, երբ բոլորը քաղցրութիւնով չէին հարցնում։ Մի մեծ և շատ կարելի է, թէ շատ չար մանուկ մինչև անգամ յանդգնեց Յովհաննէսին բրդել։ Մեր նորեկների բաղդիցը շուտով ժամի ուրթը լսցաւ և ուսուցիչները ուսումնարան եկան։ Աշակերտները ուսուցիչներին տեսնելու պէս, իսկոյն վազեցին դասատունները թափեցին և իւրաքանչիւրը իրան տեղը նստեց։ Յովհաննէսը և Նիկողայոսը միայն ափոռների մէջը կանգնած էին. նրանք դեռ իրանց համար տեղ չունէին։

3։ Այն դասատունը, ուր Յովհաննէսը և Նիկողայոսն

էին, մնաւ Հայոց լեզուի ուսուցիչը։ Այդ մի բարձրահասակ երիտասարդ մարդ էր։ Նա աշակերտներին բարևեց և նը-բանցից մէկին հրամայեց աղօթք կարդալ։ Աշակերտը պարզ և բարձր ասաց դասից առաջ ասելու աղօթքը։ Յովհան-նէսը և Նիկողայոսը աղօթեցին շատ սրտով և խնդրումէին Աստուածանից, որ Նա բարեբանէր նրանց ուսման սկիզբը։ Աղօթքից յետոյ՝ բոլորը նստեցին, իսկ ուսուցիչը մեր նո-րեկներին իրան մօտ կանչեց։ Նա նրանց հարցրեց թէ ի՞նչ են կանչում նրանց, քանի՞ տարեկան են նրանք, կարդալ գրել գիտե՞ն թէ ոչ, նրանց ծնողները ո՞վք են, նրանք ո՞ր տեղ են բնակվում։ Յետոյ մանուկներին հրամայեց փոքր ինչ կար-դալ, անգիր ասել երկու—երեք աղօթքներ և գրել մի քանի շարք տախտակի վերայ։ Մանուկները լաւ կարդացին, ա-ղօթքները հաստատ գիտէին և միջակ գրեցին։ Ուսուցիչը ե-րևի թէ նրանց հաւանեց, ջերմը մի ցուցակ հանեց և երկու նոր աշակերտների անունը նրա մէջը գրեց. Յովհան-նէս և Նիկողայոս Մելիքեան, նշանակելով, թէ Յովհան-նէսը ինը իսկ Նիկողայոսը ութը տարեկան է։

4։ ,,Շատ լաւ'' յետոյ ուսուցիչը Յովհաննէսին և Նի-կողայոսին ասաց. ,,երևումէ, թէ դուք և տան մէջն էլ'ի զուր ժամանակ չէք կորցրել, երբ սովորել էք կարդալ, գրել և աղօթել։ Շարունակեցէ՛ք ուրեմն ջանասիրութիւնով սո-վորել. դասատան մէջը ուշքներդ վրաներուդ պահեցէք, ինչ որ կարդումէք նրա վերայ ուշք դարձրէք, լսեցէք թէ միւս-ները ինչպէս են կարդում և պատասխանում, նոյնպէս լսե-ցէք, թէ ես ինչ եմ հարցնում և ինչ եմ պատմում, նկատե-ցէք բոլորը, ինչ որ դասատան մէջը լինում է։ Դասատուու-թիւնից յետոյ ես ձեզ կհարցնեմ, թէ դուք ի՞նչ էք նկա-տել''։

Յետոյ ուսուցիչը մանուկներին ցոյց տուեց առաջին ա-թոռի վերայ նրանց տեղը, ուր ամենափոքրներն էին նստած։

## ԳԼՈՒԽ III։

### Թէ դասատան մէջը ի՞նչ էլաւ։

1։ Դասը ընթերցանութիւնով սկսվեցաւ։ Ուսուցիչը պահանջումէր, որ աշակերտները պարզ, բարձր և ճանր կարդան և ամէն մի խօսքը արտասանեն էնպէս, ինչպէս կպատշաճի։ Երբ մէկը սխալվումէր, ուսուցիչը ուրախութիւնով ուղղումէր։ Բայց երևումէր, թէ նա չէր սիրում մի և նոյն բանը երբորդ և չորրորդ անգամ ուղղել։ Ամէն անհասկանալի խօսքը ուսուցիչը շուտով բացատրումէր։ Նա ոչ միայն չէր բարկանում, երբ աշակերտները նրան հարցնումէին թէ, էս կամ էն խօսքը ինչ կնշանակի, այլ և մինչև անգամ շատ ուրախանումէր էդ բանի համար։

2։ Երբ աշակերտներիցը մէկը մի քանի շարք կարդումէր, ուսուցիչը սկսումէր հարցնել էն բաներ, ինչ որ կարդացած էր լինում և պատմած։ Ով որ կարդացել էր և ուշադրութիւնով լսել էր, նա էլ լաւ էր պատասխանում, ով որ անմոգիր էր եղել, նա էլ վատ էր պատասխանում, մի քանիս ներին ուսուցիչը գովումէր և մի քանիսներին էլ յանդիմանում։

3։ Յովհաննէսը և Նիկողայոսը նկատեցին, որ ուսուցիչը մի քանի պատասխաններին կատարեալ կոչեց և մի քանիներին անկատար։ Էդպէս նա մի աշակերտի հարցրեց. „ինչո՞ւ Աստուծուն Արարիչ են կոչում“։ Աշակերտը պատասխանեց. „որովհետև Նա աշխարհս ստեղծեց“։ Ուսուցիչը էդ պատասխանին անկատար կոչեց. միւս աշակերտին հարցրեց և նա պատասխանեց. „Աստուծուն էն պատճառով են Արարիչ կոչում, որովհետև Նա է ստեղծել աշխարհս“։ Էդպիսի պատասխանին ուսուցիչը կատարեալ կոչեց։ Յովհաննէսը և Նիկողայոսը իմացան, որ կատարեալ պատասխանի մէջը պէտք է հարցն էլ կրկնվի։

4։ Երբ աշակերտները բոլոր կարդացածը և բացատրածը

կրկնեցին, էն ժամանակը սկսեցին ընթերցանութիւնը շարունակել։ Ընթերցանութիւնից յետոյ կրկին հարցեր և բացատրութիւններ առաջարկվեցին։ Երեք կամ չորս անգամ ուսուցիչը Յովհաննէսին և Նիկողայոսին հարցեր առաջարկեց։ Մեր ծանօթները ուշադրութիւնով լսում էին և էդ պատճառով շատ լաւ պատասխան տուին։ Մի ամբողջ պատմութիւն էդպէս կարդացվեցաւ և բացատրվեցաւ։

5։ Ընթերցանութիւնը վերջացաւ։ Աշակերտները հանեցին իրանց լիզանակատախտակները (գրիֆելի դօսկայ)։ Ուսուցիչը դասատան մեծ տախտակի վերայ մի քանի հարցեր գրեց, և աշակերտներին հրամայեց, որ նրանք իրանց տախտակների վերայ պատասխանները գրեն։ Յովհաննէսը և Նիկողայոսը լիզանակատախտակներ չունէին և նրանք չգրեցին։ Աշակերտներից մէկը կաւչով դասատան մեծ տախտակի վերայ պատասխանները գրեց։ Ուսուցիչը ուղղեց և պահանջեց, որ իւրաքանչիւր աշակերտ իրան տախտակի վերայ մի և նոյնը անի։ Աշակերտների տախտակներին նայելով, ուսուցիչը նըրան էր գովում, որը բոլոր սխալները ուղղել էր։

6։ Երբ բոլոր հարցերի պատասխանները գրվեցին, էն ժամանակը ուսուցիչը սկսեց դաս հարցնել։ Էդ դասին տուած էր անդիր սորվել մի փոքրիկ տուակ։ Շատերը ամենալաւ պատասխանեցին. անսխալ, պարզ, բարձր և ազդու և երբ ուսուցիչը հարցնում էր, էն ժամանակը ամեն մի խօսքը բացատրում էին։ Երևում էր, թէ նրանք անցեալ դասին ուշադրութիւնով էին լսել և տան մէջը մի քանի անգամ դաս տուած տուակը կարդացել էին։ Էդպիսի աշակերտներին ուսուցիչը ջանասէր էր կոչում։ Բայց և էնպիսի ծոյլ աշակերտներ էլ կային, որոնք համարեա՝ ոչինչ չգիտէին։ Յովհաննէսը և Նիկողայոսը նկատեցին, թէ դասերը էն մի և նոյն աշակերտները չգիտէին, որոնք դասատան մէջը անուշադիր էին։

7։ Նոր դաս պատմելով, ուսուցիչը հրամայեց աշակերտներին տետրակները հանել և գրիչներ պատրաստել։ Յով-

հանդէսը և Նիկողայոսը նկատեցին, թէ ուսուցիչը գովում էր նրանց, որոնք տետրակները և գրքերը մաքուր և կարգին էին պահել, և շատ անբաւական էր լինում, երբ տեսնում էր, թէ մի աշակերտ իրան տետրակը չի կարել, իսկ գրքերը կեղտոտած են և աղչղչորած:

,,Լաւ աշակերտը'' էդ բանի մասին ուսուցիչը ասաց. ,,պէտք է ուշադիր լինի դասատան մէջը, ջանասիրութիւնով տանը դասերը կրկնել, իսկ գրքերը և տետրակները մաքուր և կարգին պահել'':

8: Հազիւ թէ ուսուցիչը կարողացաւ նրանց պատմած առակը դասատան մէջը մէկին ասելով գրել տալ, իսկոյն զանգակը խփեցին: Մեր նորեկները չնկատեցին, թէ դասատուութիւնը ի՞նչպէս վերջացաւ: Ուստի որ և իցէ դժուարութեան նրանք շատ նոր բաներ սորվեցին և զգացին, թէ նրանց մընում է միայն մի երկու անդամ կարդալ տուած դասը և նրանք իրանց դասը շատ հաստատ կիմանան: ,,Ահա թէ ինչ կնշանակի դասատան մէջը ուշադիր լինել'', նրանք մտածեցին ,,և ահա ընչո՞ւ է ուսուցիչը կամենում, որ բոլորն էլ ուշադիր լինեն'':

9: Դասատուութիւնից յետոյ ուսուցիչը նորեկներին իրան մօտ կանչեց և սկսեց նրանց հարցնել, թէ նրանք ի՞նչ են նկատել: Յովհաննէսը և Նիկողայոսը ինչ որ դասատան մէջը գործվել էր, բոլորը նրան պատմեցին. ուսուցիչը ո՞ւմ հարցրեց, ընչի՞ն հաւանեց և ընչին չհաւանեց: Ուսուցիչը ուշադրութեան համար, մանուկներին գովեց և նրանց ասաց, որ եթէ նրանք դասատան մէջը իրանց միշտ էդպէս կվարեն, ինչպէս որ էս անդամը, էն ժամանակը շուտով լաւ աշակերտներ կդառնան:

## ԶՄԵՌՈՒ:

1: Ձմեռուայ ժամանակը արեգակը թէպէտ լուսաւորում է, բայց քիչ է տաքացնում: Նա երկար ժամանակ երկնքի

երեսին չի մնում։ Ձմեռուայ օրերը ամառուայ օրերից կարճ են, իսկ գիշերները երկար։ Հիւսիսային երկրներում ձմեռները երկար են շարունակվում և երբեմն սաստիկ ցուրտ է լինում։ Գետերը և լճերը սառչում են, հնգկս, որ ոտքով և կառքով կարելի է մանգալ սառուցի վերայ։ Երկիրը ձիւնի հաստ կարպետով ծածկվում է։ Ձիւնը շատ օգտաւէտ է, որովհետև նրա տակը սաստիկ ցուրտ ժամանակը անփնաս են պահպանվում խոտերի և ծաղիկների սերմերը։ Առանց ձիւնի սերմերը կարող էին ցրտատար լինել։

2։ Օտարերը իրանց տերևները աշունքուայ վերջին թափում են և կաղնեայ կամ կեչի անտառը, որ ամառը իրան ստուերները գնում է, ձմեռը թափանցիկ է լինում։ Տերևաթափ ճիւղերի վերայ, տերևների փոխանակ, կակղ և սպիտակ ձիւնի քուլաներ են կախ լինում։ Միայն ձմեռուայ ժամանակը եղևնիները և մայրիները են կանանչ մնում։ Սրանց վերայ ողջ ձմեռը մնում են կանանչ ասեղներ կամ փշաբեր ճիւղեր։ Էն ծառերը, որոնք տերևների փոխանակ փշաբեր ճիւղեր ունին, փշաբեր են կոչվում։ Էն ծառերը, որոնք տերևալից են— Տերևոտ։

3։ Ձմեռուայ ժամանակը անտառների մէջը շատ քիչ են լինում թռչուններ, նոյնպէս և չորքոտանիներ էլ շատ քիչ են զանվում դաշտերի վերայ, իսկ միջատները բոլորովին անհետանում են։ Սրանցից շատերը ձու թողելով կեանքից զրկվում են, միւսները խոր են մտնում երկրի մէջը, ինչպէս զորօրինակ՝ մրջիւնները։ Մի քանի միջատներ ողջ ձմեռը քնում են և միայն գարնան ժամանակն են զարթնում, երբ երկիրը տաքանում է։ (Ձմեռը սենեկաճանճերը ի՞նչ են լինում)։ Շատ թռչուններ ձմեռուայ ժամանակը դէպ ի տաք երկրներն են թռչում, շատ անգամ հազար մղոն հեռու։ Օրիծեռնակները, տորդիկները, արտուտները և սոխակները աշունքուանից սկսած մեզանից հեռանում են։ Այրենի սագերը (զագերը), բադերը և կարապներն էլ աշունքուայ ժա-

մանակը աշխատումն հիւսիսիցը դէպ ի հարաւ գնալ երկար շարքով երկնքի վերայ ձգելով։ Նրանք շատ լաւ են զգում, թէ որքան դէպ ի հարաւ է, էնքան տաք է և էնպիսի երկրներ են փնտռում, ուր ձմեռ չի լինում։ (Դուք գիտէ՞ք արդեօք, էդ երկրները որտեղ են)։ Եգիպտոսի թռչուններին մէկ տեղից միւս տեղ թռչող են կոչում։ Գռաւները կաչաղակները, փայտմորիկները և կաքաւները մեզ հետ ձըմեռում են և դրա համար կոչվում են ձմեռող թռչուններ։ Այնպէս ծառերն էլ իրանց տաք բոյների մէջն են մընում, բայց և դրանք ձմեռուայ ժամանակը էնպէս ուրախ չեն թռչում, ինչպէս ամառուայ ժամանակը։

4։ Ձորքոտանիները, բատ մեծի մասին, նոյնպէս ձմեռուայ ժամանակը թաղչում են իրանց որջերումը, բոյներումը և ծառերի խոռոչներումը (փչակ)։ Շատերը ամենացուրտ ժամանակը քնում են, ինչպէս զորօրինակ՝ ոզնին, արջը, լեռնային մուկը։ Բայց սանէտը չի քնում. նա ծառի խոռոչներումը աշունքուայ ժամանակը ձմեռուայ համար լաւ պատրաստութիւն է տեսել ընկոյզից և ողջ ձմեռը կրծում է։ Էն կենդանիները, որոնք ձմեռուայ ժամանակը քնում են, ձմեռուայ ժամանակը քնող կենդանիներ են կոչվում։ Ընտանի կենդանիները, ձիաները, կովերը և ոչխարները ձմեռուայ ժամանակը սովից և ցրտից կջարդվին, եթէ մարդը նրանց համար դռներ և մուրներ չշինէր և նրանց համար խոտ և գարի չպատրաստէր։

5։ Ձմեռը դալուն պէս՝ մարդը աշխատում է ձմեռուայ համար պատրաստութիւն տեսնել։ Կա լուսամուտը երկրորդի շրջանակներ, կամ թէ ինչպէս որ ասում ենք, սառնէք է դընում, վառարանները թէժ վառում է, հատատ շորեր է հագնում, ակներաւոր կառքերը պահում է մինչև գարունքուայ դալը և կառքերի յարկի տակից սանկանները հանում է։ (Սանկան ակների փոխանակ ի՞նչ ունի)։ Ձմեռուայ ճանապարհը ամառուայ ճանապարհից շատ հեշտ է, և դրա համար է, որ

ձմեռուայ ժամանակը ամեն ճանապարհով զանազան ծանր ապրանքներ բարձած մեծ քարվաններ են գնում։ Փոշայի սայլակը ուրախ վազում է, զանգակները խփելով, մինչև անգամ գիւղական անպիտան սօխակուը ձին—և նա էլ է, ձմեռուայ ժամանակը իրան քայլերը երկպատկում։ Սանկանները հեշտութիւնով և սղղալով ձիւնի վերայ սողում են։ Դաշտային մշակութիւններն էլ աշուանքուանից յետոյ դադարում են։ Բայց գիւղացիները առանց աշխատանքի չեն մնում ձմեռուայ ժամանակը։ Երանք երբ ալիւրը աղում են, էն ժամանակը գընում են մշակութեան, դարձարաններում բանում են և կամ թէ սայլերով և ձիաններով էս տեղից էն տեղից բաներ են կրում։ Պանայքը ձմեռը մնում են և հիւսում։ Էհա՛ թէ գիւղացիները ընչո՞ւ էնպէս ուրախ ծափահարում են, երբ առաջին ձիւնը ծածկում է խուշուները ու դարուփոս ընկած տեղերը և ճանապարհը գզվում է։

Մանուկները նոյնպէս առաջին ձիւն գալովը ուրախ են։ Երանց համար ժամանակ է ձնագնդով խաղալ, գլգել ձիւնը, սղղալ փոքր սանկաներով և երկաթեայ գործիքներով, որոնք մանուկների սառուցի վերայ սղղալու համար են շինած։ Ձրադները անների մէջը և մարխափայտերը խրճիթների մէջը ձմեռուայ ժամանակը աւելի շատ են այրվում, քան ամառուայ ժամանակը. (ընչո՞ւ)։

6։ Ուրախալի է ձմեռը, մանաւանդ էն ժամանակը, երբ արեգակը պայծառ է լուսաւորում, ձիւնալից դաշտերի վերայ փայլում են բիւրաւոր կայծեր, իսկ ծառերը խիստպէս զարդարված են թանկագին բիւրեղով։ Բայց միայն ձմեռը էն մարդու համար է ուրախալի, որը տաք տուն ունի և հաստատ ու շատ շորեր, որը սաստիկ ցուրտ ժամանակը կարող է տան մէջը բոցավառ վառարանի առաջը նստել և հանգարտ սպասել յաղթեցուցիչ ընթրիքին և տաք անկողնին։ Բայց ի՞նչ անի էն խեղճ և աղքատ ալեւոր ծերը։ Ձը նայելով սաստիկ

ցրաին, նա պէտք է լուսամանների տակին քաշքշվի և 'ի սէր Բրիստոսի իրան համար մի կտոր հաց խնդրել:

Ծերը հատ քուրք (շուրայ) չունի, նրա տրեխները ծակծկված են, չուխէն բոլորովին գզգզված ու դջլոված է, նրա ձայնը ծերութիւնից և ցրտից դողդողում է, աչքերից արտասունքը կաթկաթում է, ձեռն ու ոտը կպաւարել են և բէջում են: Հատ դժուար է էն մանկան գործն էլ, որը էգ կոյր ծերին ման է ածում. աղքատիկը ցրտից ոտները բարձր ու ցածր է անում, փչում է իրան սառած մատների վերայ, իսկ սատիկ ցուրտը նրա աչքերից արտասունք է թափել տալիս: Թողէք նրանք տաքանան, կերակրեցէք և ինչքան որ կարող էք նրանց ողորմութիւն տուէք: Լաւ է հեռանալ նոր խաղաղքից կամ որ և իցէ փափկասիրութիւնից և ողորմութիւն տալ աղքատին:

7: Բայց ձմեռուայ ժամանակը խօմ միշտ պայծառ օրեր չեն լինում. լինում են և բքեր (թիփի): Երբ բարձրանում է բուքը՝ էն ժամանակը սատիկ քամին ձիւնի քուլաները բերում է և սուլելով ու ոռնալով պատում է նրան օդի մէջը: Երբեմն բքի ժամանակը, ինչպէս որ ասում են ,,թէ որ մատը աչքդ կոխեն չես տեսնել'', տասը քայլի մէջը անկարելի է մարդ որոշել և շատ հեշտ է էգիպտի աւերուածին ճանապարհից շեղվել:

Դէռ էնքան դժբաղդութիւն չէ, եթէ սատիկ ցուրտ չի և ճանապարհորդը կարողանում է մտնել ձիւնաշեղջի տակը. ձիւնի տակը տաք է: Բայց եթէ համ բուք է ու համ ցուրտ, էն ժամանակը շատ հաւանական է մինչև անգամ սառչել էլ:

Ոհ, ինչպէս ուրախալի է լինում էգիպտի եղանակին հասնել դալ մինչև մի գիւղ: Թէպէտ և նրան բոլորովին ձիւնը ծածկել է, թէպէտ և խրճիթների օճաքները ծխից սևացած են. այնու ամենայնիւ նրանց մէջը տաք է: Խարի գիշերանը սառած և անակնկալ հիւրի առաջն է դուրս գալիս սրտաբաց և գնաղ է անում նրան նրանով, ինչ որ Աստուած իրան տուել է: Հիւսիսային կողմերումը շատ անգամ ձմեռուայ ժամանակը

խեղճ մարդիքը սառչումեն, ցրտատար է լինում նրանց քընթերը, ականջները, ձեռները և ոտները։ Զմեռուայ ժամանակը ամենասաստիկ ճայթող ցուրտ է լինում (սառնամանիք), սովորաբար Դ՝ բօրհնէքին, Խաչը ջուրը գցելու ժամանակը։

Սաստիկ ցրտին էն պատճառով են ճայթող կոչում, որ էպպիսի ցրտիցը երբեմն տան պատերի միջի գերանները ճեղքվումեն և կոտրվում։ Էնպիսի ցուրտ եղանակի ժամանակը, ասումեն թէ, մինչև անգամ թռչունները օդի մէջը սառչումեն և գետնի վերայ վեր են ընկնում։

## ԳԱՐՈՒՆ։

1։ Դեկտեմբերի կիսիցը սկսած օրը սկսումէ իսկապէս երկարանալ, բայց Մարտի 9-ին նա արդէն գրաւումէ օրագիշերի կէսը։ Էդ պատճառով գարունքուայ սկիզբը Մարտի 9-ին է համարվում։

Երեգակը գարունքուայ ժամանակը ոչ թէ միայն շատ է ճնում երկնքի վերայ, բայց և իսկապէս օրէ օր սաստիկ տաքացնումէ. ձիւնը սկսումէ փոքր առ փոքր հալչիլ և ջուրը արևերով հողիցը գետերի և լճերի մէջն է թափվում։ (Էդ ջուրը որ տեղից ժողովվեց)։ Շուտով և սառուցը գետերի վերայ տեղի է տալի արեգակի ճառագայթների ներգործութեանը։ Գետերի ափերումը օշինդր է դուրս գալիս։ Անցնումէ էլի մի շաբաթ և ողջ սառուցը բարձրանումէ վարարած ջրիցը, սևանումէ, սկսումէ կոտրվել և փխրուն սառուցները տատանվումեն գետի մի ծայրիցը սկսած մինչև միւս ծայրը։

Ջուրը գետի մէջը էդ ժամանակը էնքան է աւելանում, որ նա չի կարողանում տեղաւորվել ափերի մէջը, դուրս է գալիս և թափվումէ շրջակայ մարգագետինների մէջը։ Գետի վարարելուն հեղեղ են կոչում։

Էն փոքրիկ գետերը, որ ամառը կարելի է շատ հեշտութիւնով անցկենալ, հեղեղի ժամանակը մեծ մի մղոն տարածվում փռվումեն։ Էն մեծամեծ գետերը, որոնց մէջը հա-

գարաւոր գեաներ և գեասկներ են թափվում, գարունքուայ ժամանակը ծովի պէս տարածվում են։

Մարդիքը շտապում են օգուտ քաղել ջրի կարճ ժամանակայ վարարելովը, ապրանքով բեռնաւորված, — մեծամեծ նաւակներն էլ, գարունքուայ ժամանակը էն տեղ են գնում, ուր ամառը շատ բարակ է լինում ջուրը։ Բայց և ջրով սընկված հողը սկսում է ձիւնի տակիցը կամաց ամեն կողմից երևալ։

Անցնում է էլի մի շաբաթ — ձիւնը տեղ տեղ էնպիսի խոր փոսերի մէջն է մնում, ուր արեգակը չի ընկնում։ Բոլորովին կապոյտ է մնում երկինքը, իսկ օդն էլ բոլորովին տաք։

2։ Դեռ բոլոր ձիւնը չհալված, էս տեղ էն տեղ արդէն հին դեղնած խոտի մնացորդ և մանրուր կանաչ խոտ է սկսում դուրս գալ։

Էն դաշտերումը, ուր գիւղացիները դեռ աշունքուանիցը աշնցան կամ ածար են ցանել, կանաչ մախմուրի նման կանաչում են։

Խոտի հետ միասին դուրս են գալիս և առաջին ծաղիկները։ Ծաղկում է քարափների գլխին ու լեռների դաշտերին խլօպուրը, էնպէս որ կարծես սպիտակ կտաւ լինի փռած։ Ծաղում է անտառների մէջը մանուշակը։ Ծառերն էլ նոյնպէս ձմեռուայ քնիցը գարթնում են և արեգակի ներգործելուցը տաքանալով, հիւթով լցվում են։ Դեռ էդ ժամանակը կեչի ծառի կեղևը կրծեպէնք, էն ժամանակը նրանից մի քաղցր և անուշահոտ հիւթ կթափվի։ Տերևների կոկոնները դարձեալ աշունքուանիցը սկսած պատրաստված են։

Ողջ ձմեռը նրանք մի և նոյն դրութեան մէջն էին մնացած և հաղիւ էին նկատվում. հմի նրանք էլ սկսում են շուտով լցվել և մեծանալով իրանց կինամանի կեղևը դէն են գցում և կանաչ տերև են դառնում։

Հարունակեսցի։

# ՀՆԴԿԱՍՏԱՆԻ

## ԾՈՎԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԳԻՒՏՐ

Այս տեղից նա ծովով գնաց դէպ ի Կանանոր, որ տեղի թագաւորը բարեկամաբար նրան ընդունեց, ու հաստատեց նրա հետ դաշնակցութիւն: Արանից յետոյ ինքը յետ դարձաւ դէպ ի Պորտուգալիայ, Սոդրին հրամայելով, մինչև եկող գարունքը մնալ կանարեան ափերքումը, որ Նոյեմբերի 10-ն 1503 թուին, իրան հայենակիցներից մեծ պատուով ընդունեցաւ, իսկ թագաւորը վարձատրեց նրան իւր ծառայութեան փոխարէն, Դրաֆ Ալեգերէի պատանունով: Դեռ Գամայի դառնալից առաջ ուղարկել էին Հնդկաստան էլի երեք պորտուգալական պատերազմի նաւերի դումարտակ: Նրանք վրա հասան շատ բարեպատեհ ժամանակում, որովհետև Սամորինը վեր էր գցել Կոխինացւոց թագաւորին իրան աթոռից: Պորտուգալացիները յետ տուին նրան իրան իշխանութիւնը ու շնորհակալութեան փոխարէնը հրաման ստացան նրա հողումը մի փոքրիկ ամրոց շինելու, ուր Պորտուգալցիք Հնդկաստանում առաջին անդամ բնակեցան: Պորտուգալցւոց նաւատորմիղը յետ դառնալով դէպ 'ի իրան հայրենիքը, յանձնեց ամրոցի իշխանութիւնը մի երևելի և քաջ մարդի—Լդուարդ Պաչեկո Պերեիրէին: Ընայելով որ նրա համար թողել էին միայն երեք նաւ և 160 մարդ, համարեա՝ թէ այս տեղ գործեց նա հրաշքեր: Երբ նաւերը նրանց աչքերից հեռացան, Սամորինը դուրս եկաւ իրան ցամաքային և ծովային զօրքերով, որ Կոխինացւոց թագաւորին աթոռից վեր գցէ, նրա բանակը բաղկանում էր 60,000 զինուոր մարդից, իսկ Տրիումպարէ Կոխինացւոց թագաւորինը սակաւաթիւ և անվստահ պատերազմի մէջ, այնպէս որ, Պերեիրը չէր կարող իւր փոքրիկ ամրոցումը թաղչել: Բայց եւրոպական հիանալի զինուորական քաջութիւնը ու կրթութիւնը փրկեց մեր գիւցազնին: Սամորինի բոլոր փորձառութիւնները 'ի զուր էին, այնպէս որ վեց ամսից յետոյ հարկադրուեցաւ

նա պատերազմը ամբողջով դադարացնել, որի մէջ կորցրեց մինչև 18,000 մարդ։ Պերեիրի այս դիւցազնական մեծագործութիւնը ընդհանրական զարմանք պատճառեց իւր հայրենիքի մէջ, և երբ նա իրան հայրենիքը դարձաւ, ողջ Լիսբոնը իւր արժանաւոր հայրենակցին ընդունեց ուրախական ձայնով։ Նա այս փառքին արժանի էր ո՛չ թէ միայն իրան քաջագործութեամբ, այլև անշահասիրութեամբ։ Նա հրաժարեց Պոխինացւոց թագաւորի բոլոր թանկագին ընծաները, և խնդրեց միայն դրաւոր ապացոյց իրան կատարած մեծագործութիւնների համար։ Վերջը Լիմնանուէլ թագաւորը կարգեց նրան Գովինէի կառավարիչ, որ տեղ նրա միամտութիւնը և աղնուութիւնը պատճառ տուեցին իւր թշնամիներին գրգռել նրան։ Նրանց չարախօսութեան պատճառով նրան շղթաներով բերին դէպ 'ի Լիսբոն, ու անխնայ գցեցին բանտը։ Բայց յետոյ նա արդարացաւ և ազատվեցաւ բանտից, բայց նորա հայրենանուէր ծառայութիւնները բոլորովին մոռացուած էին մի անտանելի կերպիւ, և նա մեռաւ յետին չքաւորութեան մէջ։ Պորտուգալիայի լաւ հասկանալով Հնդկաստանի բարձր նշանակութիւնը, աշխատում էր ըմբռնել և մեծացնել վաճառականական յարաբերութիւնները. այս երկրումը աւելցնելով Պորտուգալցւոց բնակիչների թիւը։ Այս էստուր համար 1 05-ին Դօն Ֆրանչիսկոյ Ալմէիդը ուղարկուեցաւ դէպ 'ի Հնդկաստան, 22 նաւակներով, որին յանձնել էին յեա ուղարկել Պորտուգալիայ վաճառական նաւերը անպրանքներով բարձած, իսկ միւսները թողուլ Հնդկաստանում իբրև մշտական նաւատորմիղ, և ափերքի ամրոցները բաւականին բարձրացնել։ Արա համար խոստացել էին նրան ընծայատու լինել, փոխարքայի պատուանունով։ Ալմէիդը տեղացի իշխանների հետ դաշնակցութիւններ կապեց, որոնցով նրանք պարտաւորվեցան ընդունել իրանց վերայ Պորտուգալցւոց անսահման իշխանութիւնները, նրանց հարկ տալ և չը-

հակառակուիլ իրանց մայրաքաղաքներում Ֆակտորիա * և միջնաբերդ շինել տալուն, այլ և Հնդկաստանի ապրանքները Պորտուգալցոց վերայ էժան գնով ծախեն, իսկ ուրիշ ազգերի վերայ ծախեն միայն այն ժամանակ, երբ որ Պորտուգալացիք կ'յայտնեն թէ այն ապրանքները իրանց հարկաւոր չեն: Հայսպիսի հնարները հեշտութեամբ կարող էին գինուորել Հնդկաստանցոց, նամանաւանդ որ Հլամէիդը ինչպէս հարկն էր չէր պատժել իրան ենթադրեալ նաւերի շահասէր առաջնորդներին, բայց Հնդկացոց փորձառութիւնները նորա համար էին, որ իրանց վրից վեր դցեն Պորտուգալացոց իշխանութիւնը, սակայն ոչնչացան Հլամէիդի և նորա զօրքի քաջութիւնով:

Նորա որդի Լորենցէն հետևեց իր հօր քաջութեանը: Նա առաջին պորտուգալացին էր, որ գնաց դէպ 'ի կինամոնի հայրենիքը Սէյլան կղզին: Առաջնորդ լինելով 11 նաւերի, յարձակվեցաւ 200 գերազանց գինուորուած թշնամու նաւակների վերայ, որոնց Սամորինը ուղարկել էր և որոնց Լորենցէն էլ ջարդելով փախցրեց: Սամորինը, այս անյաջող պատերազմից յետոյ օգնութիւն խնդրեց Եգիպտոսի և Միրուկառավարիչ Կանցու Սուլթանից, որ Պորտուգալացոց վաճառականութիւնը ընդարձակուելուց շատ վնասուել էր:

Հնեռիկեցիք, որոնք նոյնպէս Հնդկաստանի ծովային ճանապարհը գտնելուց յետոյ, վաճառականութեան մէջ բաւականին վնաս քաշեցին, իւրեանց կարգին, նոքա ևս քաջալերում էին Սուլթանին, նրան խորհուրդ տալով, որ Պորտուգալացոց հետ կռիւ բաց անէ, ու իրանք էլ թնդանօթներով, և ուրիշ ամենահարկաւոր պատերազմական նիւթերով օգնեն նրան: Սուլթանի նաւատորմիղը, Պարմիր ծովից դուս գալով, մտաւ Հնդկական Ովկիանոսը: Պորտուգալացոց փո-

---

* Ֆակտորիայ նշանակում է՝ տեղի գործակալաց ընկերութեան վաճառականաց Արևելեան Հնդկաց:

խարքարն իրան որդին, մի քանի նաւակների վերայ առաջնորդ նշանակելով՝ ուղարկեց իւր նոր թշնամու դէմ։ Լորենցէնը, չնայելով իւր ցոյց տուած քաջագործութիւններին, սպանուեցաւ պատերազմի մէջ։ Պատերազմի ժամանակը թշնամու մի ռումբը կարեց այս քաջ պատանի զինուորի ոտը, բայց էլի նա հրաման տալով շարունակում էր գործը, մինչև որ վերջին ռումբի կերակուր դարձաւ։ Եւ նրա բոլոր պատերազմակիցներն էլ իրանց առաջնորդի պէս արժանաւոր քաջութիւններ ցոյց տուին. նրանք պաշտպանվեցին մինչև վերջին նաւավարը, ու հրացանաձգութիւնը շարունակեցին մինչև վառօդի հատնելը։ Հայրը իւր քաջ որդու մահուան վրէժը չարաչար հանեց։ Այս երբ որ Պորտուգալիայիցը մի ուրիշ օգնութիւն սացաւ, յարձակվեց իւր թշնամու վերայ և Փետրվարի 3-ն 1509-ին կատաղութեամբ ջարդուփշոր արաւ կրակի բերան տուեց բոլոր մահմեդական նաւատորմիղը։ Այն տարումը նրա դէպ 'ի Պորտուգալիայ կանչեցին, բայց նրա քամբաղդութեամբ յետ դառնալու ժամանակը Աֆրիկայի ափերքի մօտ Հոտենտացիք յարձակվեցին նրա վերայ և սպանեցին ինչպէս իրան, նոյնպէս նրա ընկերներից շատերին։ Պորտուգալացիք ամէն կերպով աշխատում էին պահպանել իրանց հետ և իրանց նուաճեալ երկիրները։ Ալմէիդից յետոյ Հնդկաստանում նշանակուեցաւ փոխարքայ այն ժամանակուայ մարդկանցից մի քաջ—հսկայ մարդ Ալֆոնս Ալբուկերկ անունով։ Այս արդէն իւր Ֆրանցիսկոս եղբօր հետ Հնդկաստանում էլած էր, որն որ սպանուեցաւ վերադարձի ժամանակ։ Ալֆոնսը մեծ ընծաներով դարձաւ դէպ 'ի Լիսբոն։ Ալբուկերկը մտածեց Հնդկաստանի մօտիկ երկիրները և ջրերը Պորտուգալացւոց իշխանութեան տակը դցել։ Բայց այս ցանկութիւնը կատարելու համար, պատահում էր ամենատեսակ հակառակութիւնների, էս հակառակութիւններից մինն էլ էս էր, որ թագաւորական պալատը, նրան մի անհաւատարմութիւն ցոյց տուեց։ Նրա պատուասիրութիւնը սահ-

մանափակելու համար, որից վախում էին, վճռեցին հիմնադրել մի քանի նահանգ։ Բայց նա իւր բարեմտութիւնով, և անփոփոխութիւնով իւր հակառակորդներին յաղթեց, նախ հարկաւոր էր Հնդկաստանում կառավարութեան կեդրոն դրունել։ Նա մեծ զգուշութիւնով ընտրեց Գոա քաղաքը, Մալաբարեան եղերքների մէջտեղում, մի փոքր կղզոյ վերայ, որ շատ յարմարաւոր էր այն տեղի վաճառականութիւնը կառավարելու համար։ Վերջին ժամանակներումը այս քաղաքը առնուեցաւ։ Բայց շուտով 60,000 զօրքով նորա տիրապետողը—Գիպալխանը վրայ հասաւ, որն որ Դեկանոն թագաւորի վասալն էր։

Ալբուկերկը հարկադրուեցաւ քաղաքը թողուլ, ու նաւակների վերայ ամրանալ, սպասելով Եւրոպայից զօրք ըստանալուն, որ գոնեայ նրանց օգնութեամբ կարողանայ կրկին այն քաղաքը նուաճել։ Վերջապէս զօրքը վրայ հասաւ, և Նոյեմբերի 25-ն 1510 թուին Գոա քաղաքը կրկին նուաճեց։ Ալբուկերկը տեսաւ այս քաղաքի կարևորութիւնը, որ տեղ կարողացաւ հաստատվել և կեդրոն շինել Արևելեան Հնդկաստանում Պորտուգալիայի իշխանութեան համար։ Հկող տարին նա արշաւանք արաւ դէպ 'ի Մալակկան, որ Գանգէսի այն կողմումն է, ու Արաբացիների, և Չինացւոց հետ ունեցած վաճառականութեան ամենահարկաւոր տեղն է։ Մայիսի 2-ն 1511 թուին Ալմէիդի նաւատորմիղը, որ բաղկանում էր 19 նաւերից և 2000 մարդից Սոխինից դուրս եկաւ։ Թնդանօթների դաւոցը բնակիչների վերայ մի այնպիսի երկիւղ դցեց, որ նրանք ընդունեցին ամեն առաջարկութիւնը և ազատեցին այն մի քանի պորտուգալցի գերիները, որոնց նրանք գերի էին տարել, ու մեր ծովագնացների համար մի օգտաւէտ դաշնակցութիւն հաստատեցին, որ թողեն իրանց երկրումը ամրոցները շինելու։ Այս դաշնակցութեան չհամաձայնեցին միայն թագաւորի փեսայն և որդին, որոնք լաւ էին համարում շարունակել պատերազմը։ Ալբուկերկը հարկադրուեցաւ Մալակ-

կան երկու անգամ ռմբահարել, որ սաստիկ պինդ ամրացած էր, և երբ որ Պորտուգալցիք քաղաքը մտան, նրանք հարկադրուեցին ինն օր քաղաքի մէջ պատերազմել։ Քաջութիւնը, կատաղութիւնը և սաստկութիւնը միմեանց ետից անցէր կենում։ Բայց պաշարվածները հարկադրվեցան փախչել, և այդ ժամանակ յաղթողները նրանց բոլոր փղերը խլեցին։ Ալբուկերկը քաղաքի ամրութիւնը աւելացրեց, շինեց ամրոց, որ իրան գեղեցկութեան համար Ֆորմոզա (գեղեցիկ) անուանեցաւ։ Վաճառականութիւնը ծաղկեցնելու համար հրամայեց նա, որ այն տեղ և Գոա քաղաքումը փող կտրեն։ Նրա համար էլ այս տեղ աւելի շատ էին գալիս, քան թէ դէպ 'ի Մալակկայ։ Այժմ Պորտուգալացւոց անունը դարձաւ զարհուրելի մինչև անգամ Հնդկացւոց թագաւորների համար։ Նրանք Ալբուկերկի մեծ դեսպան էին ուղարկում, մասամբ շնորհաւորելու նրան իւր ձեռնարկած գործերի յաջողութիւնների մասին, և մասամբ նրա բարեկամութիւնը ստանալուն համար։ Բայց Պորտուգալցւոց նաւատորմիղը շատ չմնաց. այս շահաստանում, էլի դէնը ուղևորեցաւ դէպ 'ի Մալուկեան կղզիները—թանկագին համեմունքների հայրենիքը նուաճեց։ Բաղդը և յաղթութիւնները այս գործունեայ մարդին հետևում էին։ Ալբուկերկը երբ որ դէպ 'ի Գոա յետ դարձաւ, տեսաւոր թշնամիները այս քաղաքը պաշարել են։ Ալբուկերկը այս տեղ էլ իրան թրի զօրութիւնը ցոյց տուեց և այնքան բարձրացրուց իրան թագաւորի զօրութիւնը, որ Ասիացի և Աֆրիկացի թագաւորների դեսպանները գործ էին դնում իրանց բոլոր հնարքները Պորտուգալացւոց իշխողի բարեկամութիւնը ձեռք բերելու համար։ Ալբուկերկը, Էմմանուէլ թագաւորի հրամանը և իրան խոստումը կատարեց, որն որ խոստացել էր նրան 1507-ին միրուքը վեր չանէ, մինչև յաջողվի նրան պատժել որմզդեան կառավարչին և նուաճել սուտ ամբաստանութեան համար նրա մայրաքաղաքը։ Եւ 1515 թուին ճանապարհ ընկաւ իւր նաւատորմիղով դէպ 'ի

Օրմուզդ. այս ուրիշ տարումը նրա սիպտակ միրուքը մինչև գոտիքը հասաւ։ Ալբուկերկը եկաւ, հասաւ Օրմուզդի մօտ 27 նաւակներով. 1500 Պորտուգալացիներով և 700 գնուորուած Հնդկացիներով, ու թագաւորին հարկադրեց, որ օ՛չ թէ միայն ամրոցը իրան յանձնել, այլ և ամրոցը նրա հաշուով պնդացնել տուեց։ Այս էր Ալբուկերկի վերջին քաջագործութիւնը։ Նա երբ որ յետ դարձաւ դէպ 'ի Գոա հրաժարուեցաւ իւր պաշտօնից։ Սրա հետ միացան և ուրիշ անախորժ միջոցներ, որոնք այդ հարուածը աւելի զօրեղացրին։ Նա սրանից առաջ սաստիկ հիւանդացաւ, բայց այս համբաւը նրան իւր վերջին կարողութիւնից զրկեց։ Քանի որ դեռ նաւի վերայ էր. իրան դողդոջուն ձեռներով մի նամակ գրեց թագաւորի մօտ, որի բովանդակութիւնը էս էր. „Էյնո՛ր, այս վերջին նամակն է, որ իմ մահուան մահճի մէջ գրած, գրում եմ Ձեր Մեծութեանը, թէպէտ և ի՞նչքան ուրախական նամակներ եմ գրել Ձեզ մօտ իմ ցոյց տուած ծառայութիւններիս համաձայն։ Ես այս տեղ ունիմ մի որդի Ռլագ-Ալբուկերկ անունով։ Աղաչում եմ Ձեր Մեծութեանը թոյլ տալ նրան, օգուտ քաղել ընծաներով իւր հօր ծառայութեան փոխարէն, իսկ ինչ որ կվերաբերի Հնդկաստանին, նա բաւականաչափ խօսում է իւր և ինձ համար։“ Ալբուկերկը ցանկանում էր մի անգամ էլ գանուիլ Գոա քաղաքում, և գուարճանալ այն տեղ իւր գեղեցիկ գործքերի պտուղներով։ Նա տեսաւ հեռու տեղից այս քաղաքը, բայց որովհետև Աստուծուց չէր հրամայած որ նա կենդանի այս քաղաքը մտնի, դեռ ևս նաւը չէր հասել նաւահանգիստը, որ այս հոչակաւոր նաւապետը աւանդեց իւր հոգին։ Այս պատահեցաւ Սեպտեմբերի 16-ն 1515 թուականում։ Ալբուկերկը մի առողջ կազմուածքի տէր մարդ էր։ Նորա երեսի դծագրութիւնը շատ խնդարհական էր համակիր, բայց բարկացած ժամանակը նրա հայեցուածքը շատ դարհուրելի էր։ զինուորները լաց էին լինում նրա վերայ, ինչպէս մի հօր վե-

բայ. Նրա նուաճած քաղաքների բնակիչները պարտաւոր էին նրան, նրա դրած կանոնների և բարի օրէնքների համար մինչև անգամ նրա նուաճած ժողովուրդներն էլ էին գովում նորա մարդասիրութիւնը: Իրաւ՝ թէ և Ալբուկերկի մահից յետոյ էլ Պորտուգալցիք շարունակում էին նորանոր երկիր գտնելը և նուաճելը, սակայն նրանց կարողութիւնը, որ Ալբուկերկի ժամանակը հասաւ մինչև վերջին կէտը, նրա փոխանորդների ժամանակը սկսեց կամաց կամաց վեր ընկնել: Լօնէ—Սօարէսի ժամանակում արդէն զգացին այս կորստեան հարկաւորութիւնը:

Առաջուան հեծելազօր ասպետականների քաջութիւնների տեղը դուրս եկան խաւարտամած անձինք: Ամբարտաւանութիւնը և շահասիրութիւնը փոքր առ փոքր զրկեցին Պորտուգալացոց հաւատարմութիւնը Հնդկացոց դէմ: Սրա հետ միացան չարաղործութիւններ կառավարութեան գործքերի մէջ. թուլութիւնը, դանցաւորութիւնը և շռայլութիւնը չափից դուրս գնացին, և եղան պատճառ Պորտուգալացոց անկմանը այս երկրում: Պորտուգալացոց հարաւային Ասիայում գտած մեծ կղզիների կարգին յիշատակութեան արժանի են համարվում, Յէլերէսը և Բօրնէօն: Բօրնէօն հին ցամաքի ընդարձակ կղզին է, սա անուանվում է օրանգուտանգների (անտառի մարդիք) և ոնդեղջիւրների հայրենիք: Այս կղզին շատ պտղատու է, համարեա՝ թէ այս կղզին հասարակածով բաժանվում է երկու հաւասար մասն: Ասիայի և Աֆրիկայի Պորտուգալացոց կալուածները տարածվում էին Բարեյուսոյ գլխից մինչև Չինացիների Յիամպօ նաւահանգը, 4000 մղոն տարածութեամբ: Այս երկիրներից թագաւորի համար շատ թանկագին բաներ են տարած, և իրանք, փոխարքաները հնուաքեցին իրանց համար մեծ հարստութիւն: Պորտուգալացոց վերջին մեծագործութիւնը էլաւ 1538 թուականում Սուլթան Օսմանցոց փաշի դէմ Դիու քաղաքին տղամարդաբար պաշտպանութիւնը: Հարունակեսցի:

# ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՍՅԻՑ

## ԳԵՐԱՊԱՏԻՒ ԽՄԲԱԳԻՐ

,,Գարուն'' ազգօգուտ ամսագրի։

Ձեր ամսագրի առաջին տեսրը ստացայ, կարդացի ուշադրութեամբ, արդարև նա երևելի և ախորժ գործ ունի կատարելու ազգի համար, որովհետև գարուն պիտի բերէ Ազգի մտաւոր և բարոյական անդաստանի համար, սրան հոտաւէտ ծաղիկներով և առատ պտուղներով զարդարելով։— Բայց գիտացէք. Հա՛յր, որ գարնանային եղանակին լինումեն սելաւներ, ամպերի որոտումներ, կայծակներ, երբեմն կարկուտ և մրրիկներ. սակայն բոյսերը այս ամէն ձախորդ դիպուածներին համբերումեն։ Այսպէս էլ կպատահի և Ձեր ամսագրի հետ, բայց դուք, որպէս փորձեալ անձն նախապէս ,,Մեղու Հայաստանի'' տպագրութիւնով, արիութիւնով պիտի տանէք այս քաղցր պարտաւորութիւնը 'ի փառս և յօգուտ Ազգիս։ Յայտնի բան է, որ կատարեալ ուսումնականներն էլ կաշխատին ասպարէզ բանալ դորա յառաջադիմութեան համար, և ազգի օգուտ հասկացողները օգնական կլինին։ Այս օրերումն կարդացինք ,,Ազատական'' կիսամեայ թիֆլիսկի առևտրական դպրոցի 8-դ համարումը, մէկ յօդուած Ձեր ամսագրի առաջին տեսրի վրա, բայց ոչինչ կատարեալ դատողութիւն չտեսայ, այլ միակողմանի քննութիւն և անհասկացողութիւն, և երևի թէ զրողը չէ հասկացել այնպիսի պարզ գլուածները, որի դէմ գրումենք անտիկրիտիկան և խնդրումենք մտցնել Ձեր ամսագրի մէջ։

Նախ՝ թէ ,,Ձեր կարծիքով դեռ մեծ մասը մնում է Կովկասի ձնի տակը, . . . . . և մնում է անհալ յիմարութեան սառոյցը'' : Ուրեմն նրա կարծիքով կամ բոլոր ազգը կամ մեծ մասն է լուսաւորուած, բայց ամենայն մարդ կասէ թէ այոց ազգը որ հարիւր մասն բաժանենք իննսունուինն մնում է տգիտութեան մէջ, իսկ մէկ մասն էլ բաժանւում են երկու՝ ուսումնական և թերուսումն :

Երկրորդ՝ պէտք է հասկանալ, որ Թաղիադեանցի ճառը ա) է Պալկաթայի օրիորդների համար, և նրա հետ միասին ընդհանուր ազգի համար. բ) նա դաստիարակութեան օգտի պատուէն է ցոյց տալի և անդաստիարակութեան վնասը. գ) կրօնական ազդեցութիւնն առաջացած ուսումնականութենից. դ) ցոյց է տալի այսկի ժամանակից ուսման ծաղկիլը այստանում, և ապա չորրորդ դարից մի քանի նախարարների ուսեալ կընկերանց անուններն է յիշատակում, որպէս զի հիմիկւանները էլ վառվին այնպիսի հոգով և դաստիարակեն իրանց աղջկերքը. ե) նա խօսում է դլխաւորապէս այ աղջկերանց կարդալու, կրօնագիտութեան, տնտեսութեան և համեստութեան վրա, բայց կրիտիկոսը, դաստիարակութեան մեթոդներն է պահանջում, այս բանի մէջ կրկին երևում է դատողութեան թերութիւնը, որ 4-դ դարի մեթոդը խընդրում է 19-դ դարին համեմատ, առանց զուգակշիռ անելու յայնժամեան և այժմեան ուսմունքների և մեթոդների գերազանց ծաղկիլը, սրանով յայտնվում է նորա պատմութեան անտեղեկութիւնը, ուստի անտեղի ասում է թէ ,,ինչի՞ խաբել ժողովուրդը : Ամենքի համար պարզ բան է, որ հիմի ժամանակիս պահանջած ձևերն ու ուղղութիւնն ունի դաստիարակութիւնը : Ի՞նչպէս կարելի է այերին վեր առնել 19-դ դարիցը տանել 4-դ և 5-դ դարը : Ընդ մարդուս բանականութենին ընդդէմ բան է : Դ՝ ի՞նչպէս կարելի է, որ հէնց միայն այերը ընդդիմանան էն բանին, որ ընդունել է բոլոր լուսաւորված աշխարհը. էդ կնշանակէ կոյր ֆանատիկոսութիւն'' :

Այո՛, մենք ևս կասենք, թէ այն կրիտիկայն է կոյր ֆանատիկոսութիւն, որովհետև հանդուցեալ Թաղիադեանցի գրուածքի մէջ չկայ ոչինչ խաբելու բան ժողովրդեանը, նա չէ գրում թէ 4-դ կամ 5-դ դարերի մէտօդով դաստիարակել, այլ թէ այն ժամանակվայ կրնկտերանցը օրինակ առնուլ և հիմիկվան մետոդով սովրեցնել: Մի՞թէ Պարոն կրիտիկոսը չգիտէ, որ ինչպէս Վալկաթայի, նոյնպէս և ուրիշ տեղերի, ինչ տեղ որ Հայերը բնակվում են, ուսումնարանների մէջ նոր մետոդով են դաստիարակվում, եթէ գիտէ, հապա ընչո՞ւ է ծուռ մեկնում Թաղիադեանցի ճառը. մի՞թէ ամենքին անհասկացող է կարծում, կամ ընչո՞ւ պարզ չէ դուրս բերում ինչպէս գրում է ,,խաբեբայութիւնը, ֆանատիկոսութիւնը:

Յիրաւի չէ ունենալու այն երևելի հայկաբանը նշանակութիւն հեղինակների մէջ իրա գրվածքներով, երբ այնպիսի կրիտիքական գրվածքներ հանդէս կուգան:

Բայց Պարոնին ցոյց տանք թէ Թաղիադեանցը ազգասիրութենից շարժած գրում է մեր Ազգի օրիորդների դաստիարակութեան համար ամենաստոյգ, իսկ Պարոն կրիտիկոսն է կամենում խաբել. ասելով ,,Ամենքի համար պարզ բան է որ հիմի ժամանակիս պահանջած ձևերն ու ուղղութիւնն ունէ դաստիարակութիւնը'', իսկ մետոդները չէ ցոյց տալի, որովհետև ամենքին յայտնի է, սակայն մենք կասենք՝ թէ Թաղիադեանցի գլխաւոր նպատակն է ազգային լեզուն, կրօնը և անտեսութիւնը:

Եվրոպէ՝ Դուք գրել էիք թէ, մի քանի աշխարհական անձինք սովորելով Գերմանիայում նրանց Աստուածաբանութիւնը և նրանց կրօնքը, և յետ գալով իրանց հայրենիքը սերմանում են Գերմանացւոց վարդապետութիւնը ազգի մէջ: — Պ. կրիտիկոսը պահանջում է նրանց անունները: Զարմանք բան. մի՞թէ յայտնի չէ նրան Շամախեցի Սարգիս Խամբարձումեանը որ սովրեցաւ Բազելում, և եկաւ Շամախի ու աշխատում էր տարածել լութերականութիւնը, մին-

չև որ անցեալ տարի օրհնաբանեալ Ռուսաց կառավարութիւնը հեռացրուց նրան այն տեղից Անդրկովկասեան կողմը։ Աւելորդ ենք համարում յիշել և նրա ընկերների անունները։ Այս գործը ամենքին յայտնի է։

Թէպէտ Ձեր ամսագիրը պէտք է լինի Մարտ ամսինը, և նրա կրիտիկան է Մայիսումը, բայց Ձերն էլ նոյն ամսուան պիտի դուրս գայ։

Գ. Ներսիսեան։

---

# ՄԵՆԲԱՎԷՊԵՐ

---

## ՄԵՔԵՆԱՅ

## ԼԵԶՈՒՆԵՐ ՍՈՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ալիրէդ Լօնգ անգղիացին գտաւ մեքենայ, որին անուանեց „Մետաբալէին", զոր մանրամասնաբար ստորագրեց մէկ ուրիշ անգղիացի Թօմաս Պրենդերգաստ, առանձին գրքոյկի մէջ, բացատրելով նորա գործածութեան բոլոր մեքենականութիւնը։ Արդարև՝ այս է օգտակար մեքենայ օտար լեզուներ սովորեցնելու համար։ Ի՞նչպէս են սովորում մեր երեխայքը ուսումնարանների մէջ։ Ողջ տարիքը սերտում են բառերը թարգմանութեամբ, քերականութիւնը, համաձայնութիւնը և սրամէն յետոյ դեռ ևս չեն կարողացել խօսել բուն գաղղիացւոյ կամ անգղիացւոյ հետ։ Եւ արդ ինչպէս գեղեցիկ են շաղփաղփում հարուստ ծնողաց երեխայքը, որք ունին օտարազգի մանկավարժներ և սովորել են լեզուն մեքենայաբար, այս իսկ է շինում այժմ մեքենայ։ Երեխայքը սովորելով լեզուները ուսումնարաններում սիստեմատիքաբար (կարգաւորեալ պայմանով), պէտք է անգիր սերտեն 00-ից մինչև 600 բառ, որ այն լեզուն լաւ գիտենան, բայց սակայն ամենևին չեն կարող շուտ շուտ խօսել, իսկ փոքրիկ աղջիկն, սերտելով

մինչի 300 բառ և ականջով նախադասութիւնք մանկավարժուհուց խօսումէ շուտ և առանց կապելու։

Մեքենայապէս ուսանելով 20 բառ, նոցա ամենայն քերականական փոփոխութեամբ, կարելի է արդէն սկսանել խօսիլ։

Իմ գիրս ձեր սեղանի վրա է։

Ձեր մատանին դրած էր իմ բաժակի մօտ։

Նորա դանակը երևաց իմ աթոռի տակը։

Խառնեցէք այս նախադասութիւնքը ամենակարելի փոփոխութիւններով, և կէս ժամ կլինի ձեր խօսակցութիւնը, որովհետև դուք կստանաք եօթն հարիւր նախադասութիւնք, յետոյ դրեցէք փոխանակ սովորած բառերին, գիրք, աթոռ, մատանի, բաժակ, դանակ և այլն. նոր սերտած բառեր և էնդունք բաժանեցէք զանազան կապակցութեանց մէջ, և դուք շուտով և հեշտ կսովորիք այն լեզուն, որով դրած կլինին այն բառերը։

Նոր գտած մեքենայն առաջ է բերում բառերի այս ընդմիջումն, և այն այնպէս է շինուած՝ որ ոչ երբէք այս ընդմիջաելուց չի դուրս գալ անկանոն նախադասութիւն։ Նա ներկայացնումէ քառակուսի ոսկորներ, որոց կողքերը միշտ համապատասխանումէ միւս ոսկորների միատեսակ կողքերին, և տալիս է աւելի քան հինգ հազար ուղիղ նախադասութիւնք։ Տեղափոխելով նրանց իւր կամքին և մեքենայաբար սրտասանելով, սերտումէն էնդունք և հեշտ սկսումէն խօսիլ։

Մեքենայի օգուտը աւելի նորա մէջ է, որ նա իւրաքանչիւր անգամ առաջ է բերում միայն մէկ նախադասութիւն համեմատ բանից, երբ որ դասական գրքի մէջ աշակերտը տեսնումէ յանկարծ մի քանի նախադասութիւնք, և սրամէն նորա միտքը զբաղուած է։ Մեքենայն շինուած է ինչպէս արկղ (դուքի) ոսկորներով և շուշէ ծածկոցով։ Դու կոթի շարժելով դուրս են գալի ծածկոցումը ոսկորներ ածական անուններին, բայերի, նախադրութիւնների և մակբայների իրանց քերականական յարաբերութեամբ։ Արժապետները և ուսանող-

ները կարող են տեսնել սրանում միայն խաղալիկ, բայց մենք կարենք հաւատացնել նրանց, թէ այս մեքենականութիւնը կատարեալ բոնում է ամենալաւ դասերի տեղ։

Պրէնդերգասի գիրքը այս մեքենայի համար կոչվում է „rte Mostery of Languages, ou the Art of Speaking foreign tongues idomatically“.

## ԼՕՆԴՈՆԻ ՄԷՋ ՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Վերջին ժամանակին Լօնդոնում և ընդհանրապէս Անգլիայում լինում են այնպիսի զարհուրելի յանցանքներ, որ հասարակութիւնն չէ կարողացել ուշքի գալ մէկ ահաւոր տպաւորութենից, երբ արդէն կրկին պատրաստ է կախաղանը։ Մօտիկ ժամանակ, Լօնդոնի մէջ տեղում, հիւրանոցի մէջ եղաւ սպանութիւն։ Մէկ մարդ լաւ հագած, եկաւ հիւրանոցը երեք երեխերքով, որք էին վեց, ութն և տասն տարեկաններ, յայտնեց, թէ գնում է նրանց հետ Աւստրալիա, ճաշ կերաւ երեխանց հետ, ուղարկեց նրանց խաղալու, ինքն պառկեցրեց նրանց քնելու և դուրս գնաց, ասելով պանդոկատիրոջը, թէ միւս առաւօտը յետ կդառնայ։ Սակայն միւս օրը չեկաւ անծանօթը և երեխայքը չզարթեցան։ Պանդոկատէրը ինքն գնաց զարթեցնելու և երեքին էլ դատաւ մեռած։ Կանչեցին բժշկներուն, այլ վերկացնել ապարդիւնները անկարելի էր։ Ծառաներից մէկը ճանաչեց երեխանցը և ասաց, թէ նոցա հայրը — դպրոցի վարժապետ Այլիան է, որ բաժանուեցաւ կնոջմէն, որ ունէ շաղկապ բիլեարդնի ֆաբրիկանդ Էրնէստ Սուտսէի հետ, և թէպէտ գիտէր, թէ երեխայքը նրանը չեն, բայց թողեց իւր մօտ երեք մանուկներուն և հոգս էր անում նոցա վերա։ Մի քանի օր առաջ սպանութենից, կինը վեր առաւ նրա մօտից երեխանցը, յայտնելով, թէ նա գընում է Աւստրալիա։ Այլիան կանչեցին հիւրանոցը և նա յայտնեց թէ սպանողը պիտի լինի Սուտսէն։ Նոյն ժամին յայտնեցին յանցաւորի մարմնական նշանները և նրան բըռ-

նելու համար նշանակուեցաւ հարիւր ֆունտ ստերլինք։ Երեք օրից յետոյ եկաւ Բամդէտ նոյն անծանօթը կնկանով և երեխով, և գիշերով նրանց սենեակումը լուեցաւ երկու տարձանակի գցելու ձայն։ Սպանողին բռնեցին և ճանաչեցին որ Սօուտսէն է, որ սպանեց իւր ճանապարհակցին և երեխին։ Նախ կարծեցին թէ սպանուած էր Ալայտի կինն և նորա վերջին մանուկն; այլ յետոյ երևեցաւ որ նա էր Սօուտսէի օրինաւոր կինն և նորա աղջիկն, իսկ Ալայտի կինն գնացել էր Աստրալիա, յանձնելով իւր չորս մանուկները բարի մարդկանց, որ յանձն էին առել սնդել։ Ի՞նչ է պատճառը այս խոովարար չարագործութեան։ Սօուտսէն պատասխանեց հարցմունքին թէ նա սպանեց Ալայտի երեխանցը խղճալով, որ նոքա չմնան վերջին աղքատութեան մէջ, իսկ կնոջը և աղջկան գնտակով սպանեց, որովհետև ոչինչ չունէր նրանց կերակրելու համար։

Ահա ուրիշ դրամա։ Ի Դրիպլենդտոն (Աօրկշէյրում) ընտրեցան ինքնակամ զինուորներ և լաւ թանք գցողներ զինուորական կրթութեան հանդէսի համար և կրթութենից յետոյ պատրաստեցաւ խնճոյքը։ Մէկ րիֆլմէն Էլի Սէյին անունով, պատահեցաւ խնճոյքի մէջ աղջկայ հետ, որի հետ վաղուց ծանօթ էր և խնդրեց ձեռքը, միայն Աննա Բրուկ չըդարձրեց նորա վրա ոչինչ մտադրութիւն, և պար եկաւ ուրիշ երիտասարդի հետ։ Էլի Սէյին տեսնելով թէ Աննան գնումէ տուն, գնաց նորա ետևից նրա մօր մօտ, տանելով իւր հետ զարաբինէն, և երբ աղջիկն ուղղակի ասաց թէ չէ սիրում նրան և չի ամուսնանալ նորա հետ, նա խփեց նորա գլխին և մի քանի անգամ հրացանի սրածայրով վերաւորեց։ Աննայի մայրը վազեցաւ դալմազալի վրա, բայց Սէյին բռնեց նրան և յետոյ ուզումէր իւր շլինքը կարել, երբ որ դուրս վազող հարևանները կանգնեցրին նրան և ներկայացրին պոլիցիին՝ նա կարողացաւ վերաւորել իրան, բայց բժիշկները յայտնեցին թէ այն չէ վտանգաւոր, որովհետև նորա գլխերը

մեռան։ Այս նոր Օթելլոն ամենևին չէ զղջում իւր չարագործութիւնը, և ասում է թէ իրաւացի է արել։ Ննա Բրուկն էր քսան տարեց, նա ծառայում էր գործարանի (на фабрикѣ) մէջ, նորա ծնողն է 65 տարեց։ Սպանողն էր շատ ջահել և մինչև մտնելը հրացան գցելու մէջ՝ էր դերձակ։

Երեխանց սպանութիւնն Լոնդոնի մէջ դառել է արհեստ և մօտ ժամանակիս դատապարտեցին կնոջ, որին յանձնել էին սպանել մանուկներուն։ Երբեմն իրանք ծնողներն են կատարում այս։ Սկին—Մարկեռումը կենում էր Դժոնլէկի ընտանիքը, գոր բաղկացնում էին նորա կին Էստէրն, պսակուած աղջիկն, 14 տարեկան որդին Դժոնի և երեք փոքր երեխայքը՝ Էլլեդէն 5, Էստէրն 2 և Կրիստոֆն 9 տարեկան։ Հայրը գործլի էր ծախում, իսկ գիշերը էր պահապան (հասաս)։ Ապրում էին աղքատ՝ բայց չէին վերջին չքաւորութեան մէջ, թէպէտ Էստէրը միշտ գանգատում էր իւր վիճակից։ Մօտերումն մարդը տուն եկաւ և կինն ասաց նրան՝ թէ երեխանց հետ վերջացրեց գործը, թէ նրանց էլ պէտք չէ այլևս կերակրել։ Դժոն չիմացաւ, թէ ի՞նչ է նշանակում այս, և կինը ցոյց տուաւ սպանած Կրիստոֆ որդուն և երկու մեռած պստիկ աղջիկներանցը։ Հօր աղաղակի վրա վազեցան պսակած աղջիկը փեսային հետ, մեծ որդին, և զարհուրանքով նայեցին երեխանց դիակների վրա։ Պոլիցիայն բանտարկեց սպանողին, որ թուում էր խելքից զրկուած և հաւատացնում էր՝ թէ սպանեց երեխանցը, որ սովից չմեռնին։ Այս էլ արդարացել է որպիսին ներկայացրեց Սուտսէն։

---

Հրատարակիչ Ստեփանոս տէր քահանայ Մանդինեանց։

---

Дозволено цензурою. Тифлисъ 15-го Мая 1866. г.
'ի Տպարանի Գլխաւոր Կառավարութեան
Փոխարքային Կովկասու։

1) "Գարուն", ամսագիրն դուրս գալով ամիսը մի անգամ կպարունակէ իւր մէջ հոգևորական առարկայք՝ պատմութիւն քրիստոնէութեան և Եկեղեցւոյ, ճառեր և քարոզներ։

2) Օմաններ, գրոյցներ, համառօտ նկարագրութիւնք, տեղագրութիւնք, դրամէք և ոտանաւորներ։

3) Տեսութիւն մատենագրութեան։ Սրան կվերաբերի կրիտիքական քննութիւն հայերէն տպած գրքերի, և պէտաղոգիկական յօդուածներ։

4) Տնական տարեգրութիւն—ներքին կեցութիւն Հայոց, և Ֆիլէտոն։

Յանկացողք ստանալ այս ամսագիրը կարող են դիմել հրատարակողին — Въ Редакцію Армянскаго журнала „ВЕСНА" въ Тифлисѣ, въ домѣ Протоіерея Манденянцъ.

Ամսագիրը կբաղկանայ չորս կամենդարնի թերթից, այն է 64 երեսից, և 12 տեսարակների գինն է 6 մանէթ՝ թէ Թիֆլիզում և թէ ուրիշ քաղաքներ ուղարկելով։